AZG NEW 1.QXD 8/27/2009 11:17 PM Page 1

Ազգ
Azg
28 ՕԳՈՍՏՈՍ 2009 ՈՒՐԲԱԹ 153 (4295)
ISSN: 1829-1651

# Ինչո՞ւ անհետացան թերթերն ու ամսագրերը




Երեկ Նոր Նորքի 3-րդ եւ 4-րդ զանգվածների խաչմերուկին կից նախկին թերթի կրպակում նկատեցի, որ թերթերի ու ամսագրերի փոխարեն մի երիտասարդ վաճառում էր ձմերուկ ու սեխ: Իհարկե, այս զավեշտական արարքի մասին չէի կարող չարձագանքել ու «Հայմամուլի» ղեկավարության ուշադրությունը չհրավիրել այս փաստի վրա: Ի դեպ, այդ տարածքում թերթի ոչ մի կրպակ չկա: Ինչո՞ւ եւ ո՞ւմ ձեռքով են այդ թերթի կրպակում այսօր սեխ ու ձմերուկ վաճառում: Իսկ ձմռանը ի՞նչ են վաճառելու. գուցե օճառ, կոշիկ, հաց, բենզին... բայց ոչ թերթեր:

Հուսանք, որ թյուրիմացությունը շատ արագ կվերացվի եւ բնակիչներին թերթեր գնելու հնարավորություն կընձեռվի:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Վրացի սահմանապահները՝ «չհամաձայնեցված», բայց հայկական տարածքում

Հայաստան-Վրաստան հարաբերությունները պաշտոնական բոլոր մակարդակներում հանդիպումների ժամանակ որակվում են որպես «չկան հարցեր, որ չլուծվեն», իսկ ավելի հաճախ էլ բարձրաձայնում են հարցերի բացակայության մասին, մինչդեռ հայ-վրացական խնդիրները շարադրելու համար տեղ ու ժամանակ միշտ որ շատ ու շատ հասկացվեն:

Եթե նախկինում հայ-վրացական խնդրահարույց ոլորտները վերաբերում էին ամենից առաջ կրթությանը, կրոնին, լեզվին ու հայապահպանության այլ բնագավառների, ապա գնալով «խնդրահարույցները» շատանում են:

Հայաստանի ու Վրաստանի միջեւ Խորհրդային Միությունից ժառանգություն մնացած սահմանների սահմանազատումն ու սահմանագծումը մի երկար ժամանակ է, ինչ գործընթաց է երկու երկրների համատեղ հանձնաժողովի աշխատանքի առումով: Սակայն դեռեւս այդ աշխատանքի վերջն առանձնակի չի երեւում, դրա փոխարեն ի հայտ են գալիս խնդիրներ, լուրջ խնդիրներ:

Հայաստանի տարածքային կառավարման նախարարությունից հաղորդել են, որ Բավրա գյուղի գյուղական համայնքի ղեկավար Կորյուն Սումբուլյանը մայիս ամսից բազմիցս դիմել է նախարարություն եւ տեղեկացրել, որ վրացի սահմանապահները մտել են գյուղի տարածք եւ գյուղացիներին թույլ չեն տալիս այնտեղ գյուղատնտեսական աշխատանքներ կատարել:

«Պանարմենիըն.նեթ» գործակալության փոխանցմամբ, գյուղապետը մանրամասնել է. «Մենք դիմեցինք Հայաստանի ԱԳՆ եւ տարածքային կառավարման նախարարություն: Այնտեղ մեզ ասացին, որ գյուղացիներն իրավունք ունեն այդ հողերի նկատմամբ եւ կարող են հանգիստ օգտագործել դրանք: Սակայն հայ սահմանապահներն ասում են, որ այդ տարածքը վիճելի է, հետեւաբար, գյուղացիներն իրավունք չունեն դրանք օգտագործելու»:

Տարածքային կառավարման նախարարությունից հայտնել են, որ այդ խնդիրը չի մտնում գերատեսչության իրավասությունների մեջ: «**Ազգին**» արտաքին գործերի նախարարությունից տեղեկացրին, որ տարածքը, որին վերաբերում է Բավրայի գյուղապետի դժգոհությունը, դեռեւս համաձայնեցված չէ սահմանազատման ու սահմանագծման հանձնաժողովի կողմից, եւ այդ ուղղությամբ դեռ աշխատանքները շարունակվում են:

«Երկու պետությունների միջեւ երկուսի կողմից էլ վիճելի ճանաչված տարածքներում սահմանների դելիմիտացիայի հանձնաժողովի աշխատանքի ժամանակ տարածքային վեճի դեպքում Վրաստանի կողմից միակողմանի զինված ենթաբաժանումների ներխուժումը միջազգային իրավունքով որակավորվում է որպես ագրեսիա: Տվյալ դեպքում պաշտոնական Երեւանի կողմից ադեկվատ քայլերի բացակայությունը գնահատվում է որպես լուռ համաձայնություն եւ տարածքների կամավոր հանձնում», «Պանարմենիըն.նեթը» մեջ է բերում փաստաբան-միջազգայնագետ, Կովկասի ինստիտուտում միջազգային իրավունքի դասախոս Նորայր Բաբաջանյանի խոսքերը:

Սահմանների դեմարկացիան եւ դելիմիտացիան Հայաստանի առաջարկությամբ կարող են իրականացվել փաստացի հողագործության մոտեցմամբ: Ու թերեւս այս պարագայում էլ հասկանալի է վրացական սահմանապահների նմանօրինակ պահվածքը, քանի որ Բավրա գյուղի բնակիչների համար հողագործության ավանդական տարածքներն այժմ դառնում են վիճահարույց:

**Ա. Հ.**

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՆԱՅՔ

# Գեղեցկությունն ու կանացի հմայքը կփրկե՞ն ...

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

**Ադրբեջանում ավանդույթ կա՝ հարկավոր բաներն անել կանանց միջոցով: Երբ, օրինակ, «հարկավոր էր» փակել Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ բեռների մուտքը, «կանանց գունդը» նստացույց էր անում երկաթգծերի վրա: Հետո պաշտոնյաները արդարանում էին. «Բա հո չէինք կոտրելու մեր կանանց»: Այդպես է սկսվել շրջափակումը: Դժգոհ էին Մոսկվայից՝ Գորբաչովին անիծում էին կանանց լեզվով, իսկ տղամարդ ղեկավարներով՝ արդարանում, որ ոչինչ անել չեն կարող: Պատերազմի ամենաթեժ պահերին Զեյնաբ Խանլարովան մտադիր էր առաջին գիծ մեկնել՝ զենքը ձեռքին, բայց Հեյդար Ալիեւը, չգիտես ինչու, նախընտրեց Լեյլա Յունուսովային եւ նշանակեց ՊՆ վերլուծական կենտրոնի ղեկավար, իսկ Լալա Հաջիեւային՝ պետական քարտուղար եւ ուղարկեց Ֆիզուլի, որ ամոթանք տա ճակատից նահանջող «տղամարդկանց»: Եվ Լալան խոսեց ու խոստովանեց, որ «90 օր անընդմեջ Շուշիից Ստեփանակերտը հրետակոծվել է, բայց ոչ ոք քաղաքը չի լքել»:**

**Վերջերս էլ Իլհամ Ալիեւը «կանանց գունդը» գործուղել էր Թուրքիա: Խորհրդարանի կին պատգամավորները ծնկաչոք այցի էին գնացել Աթաթուրքի շիրմին եւ բարբառել. «Ով բոլոր թուրքերի հայր, զարթնիր քո նվիրական քնից եւ տես, թե ինչ են անում քո հետնորդները: Նրանք որոշել են բացել Հայաստանի հետ սահմանը եւ Ադրբեջանին մենակ թողնել»: Տեսարանն այնքան նողկալի էր, որ նույնիսկ Թուրքիայի վարչապետի նյարդերն էին տեղի տվել, եւ նա տղամարդավարի ամոթանք էր հղել Բաքու. «Չե՞ք ամաչում, որ ձեր կանանց ստորացնում եք»: Իսկ Իլհամ Ալիեւը, գոհ, որ նպատակին հասել է, դարձյալ չքմեղացել էր. «Ադրբեջանը դեմոկրատական երկիր է»:**

**Այսինքն, ամեն ինչ կարելի է, նույնիսկ՝ կին պատգամավորի ստորացումը, եթե դա ծառայում է «հայրենիքի պաշտպանության եւ անվտանգության գործին»:**

**Տերն իրենց հետ՝ կարող են ազատորեն օգտագործել կանանց: Թե՛ ներսում, թե՛, մանավանդ, դրսում: Խնդիրն այն է, թե ինչո՞ւ Ադրբեջանի եւ ոչ մի առաջնորդ համարձակություն չի ցուցաբերում ասելու այն, ինչ իրականում մտածում է: Ազգային բարդո՞ւյթ է:**

*Տես էջ 2*

# Միասին եւ... լուռ

**Երեկ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը այցելեց Սեւանում տեղակայված «Միասին» երիտասարդական շարժման ճամբար, որը օգոստոսի 24-27-ը իր հանգիստն է անցկացնում այնտեղ: Մինչ նախագահի կժամաներ, ճամբարում տեղեկացանք, որ այնտեղ են եկել շարժման առավել ակտիվիստները՝ շուրջ 500 հոգի: Նրանք, իրենց խոսքերով, սովորում են ստեղծել եւ մերվել կոլեկտիվին, ղեկավարել այն եւ այլն:**

**Ճամբարում էր նաեւ ՌԴ Պետական դումայի պատգամավոր, «Երիտասարդ Ռուսաստան» միության առաջնորդ Մ. Միսչենկոն: Նա շեշտեց, որ Ռուսաստանում իրենք կազմակերպում են նման ճամբարներ, եւ շատ ուրախ է, որ Հայաստանում նույնպես նման շարժ կա: Սա, ըստ Միսչենկոյի, կպատրաստի բարեկիրթ, հայրենասեր երիտասարդներ:**

**Ժամանելով՝ նախագահը շրջեց ճամբարում, սակայն լրագրողներիս սպասած հարց ու պատասխանը տեղի չունեցավ: Նախագահը գրեթե միշտ լուռ էր: Նախորդ օրը ճամբար էր այցելել նաեւ վարչապետը:**

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# Բանակցություններ «վստահ եւ արժանապատիվ դիրքերից»



Երեկ նախագահ Սարգսյանն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել պաշտպանության նախարարությունում՝ ՊՆ ղեկավար կազմի մասնակցությամբ: Զորամիավորումներից մեկում պլանային տեսչական ստուգման արդյունքների մասին ՀՀ գլխավոր ռազմական տեսուչ Միքայել Հարությունյանի զեկույցը լսելուց հետո նախագահը կոնկրետ հանձնարարականներ է տվել պատասխանատուներին: Նա նաեւ ցանկություն է հայտնել լսել խորհրդակցության մասնակից սպաներին եւ գեներալներին: Երկրի նախագահը, կարեւորելով բանակի մարտական պատրաստության բարձրացման, զինված ուժերի մշտական զարգացման ուղղությամբ ձեռնարկվող հետեւողական աշխատանքը՝ նկատել է, թե պաշտպանական համակարգը պետք է անընդհատ կատարելագործվի եւ համահունչ լինի ժամանակի պահանջներին. «Երկրի քաղաքական ղեկավարությունը բանակցային գործընթացում հանդես է գալիս վստահ եւ արժանապատիվ դիրքերից, քանի որ նման հնարավորություն տալիս եք դուք, տալիս է բանակը՝ մեր երկրի ամենակայացած կառույցը», ասել է Նախագահ Սարգսյանը:

# Վաղվա «Ազգ, Մշակույթ-Հավելվածում»

**«Սարգիս Խաչենց» եւ «Փրինթինֆո» հրատարակչության օրերս լույս ընծայած Կոստան Զարյանի «Բառերի ոսկին» բանաստեղծական ժողովածուի առիթով «Ազգի» հարցազրույցը հատորը կազմող եւ խմբագիր, գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանի (Յուրի Խաչատրյան) հետ:**

**«Անցյալի էջերից» խորագիրը ներկայացնում է Գրիգոր Աճեմյանի հրապարակումը՝ Գուրգեն Մահարու Երկերի 5-րդ հատորի տպագրությանն առնչվող: Ժամանակ, իրողություն, վերաբերմունք:**

**Հայ ժողովրդի երկարաձիգ պատմությունն ու նրա բախտորոշ տարեթվերը. 1915-ը եւ սփյուռքացված արեւմտահայությանը-պատասխան ամենավճռական քայլը՝ «Նեմեսիս»...՝ Հակոբ Հակոբյանի մտորումներում:**

**Արծվի Բախչինյանի իտալական տպավորությունները. «Բալետի արքան եւ իր շքախումբը. Ռոբերտո Բոլլեի գալա-համերգը» հրապարակման մեջ:**

**Համբարձում Սահակյանի հիշատակի խոսքը Լեւոն Թուխիկյանին, Լեյդենից, Հոլանդիա:**

**Սփյուռքահայ գրականագետ Վարդան Մատթեւոսյանի Դանիէլ Վարուժանի «Ջոն» բանաստեղծության նորահայտ տարբերակը:**

**Մ. Բ.**

# Փաստահավաք խմբում դժգոհ են ԱԺ-ի ժամանակավոր հանձնաժողովից

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**




Երեկ «Հայացք» ակումբի հյուրերն էին մարտիմեկյան իրադարձությունները ուսումնասիրող փաստահավաք խմբի անդամներ Անդրանիկ Քոչարյանը եւ Սեդա Սաֆարյանը: Նրանք ներկայացրին այն մտահոգությունները, որ վերջին ժամանակահատվածում ԱԺ-ի ժամանակավոր հանձնաժողովի կողմից արագացված զեկույց է կազմվել, հաշվի չառնվելով իրենց խմբի ուղարկած երեք զեկույցներում պարզաբանված փաստերը, ներկայացված տեսաերիզը, լուսանկարները եւ այլն:

Պրն. Քոչարյանը նշեց. «Հաշվի առնելով, որ ժամանակավոր հանձնաժողովը ըստ էության վերջին շրջանում նիստեր չի գումարել (փաստահավաք խմբի աշխատանքները կասեցնելուց հետո), մենք մտավախություն ունեինք, որ բացի այս զեկույցներից, նաեւ ի մի չեն կարողանալու բերել այն նյութերը, որոնք հետագայում վերջնական զեկույցում կարող են ներառվել եւ լույս սփռել տարբեր հանգամանքների վրա»:

Անդրադառնալով պատկան մարմիններից իրենց տրամադրված տեղեկատվությունը, թե մարտի 1-ի առավոտից մինչեւ օրվա վերջ ի՞նչ քանակով, ի՞նչ կառուցվածքով, ոստիկանական զորքերը, ոստիկանության ուժերը՝ ինչպիսի՞ սպառազինությամբ, ո՞ր ժամին ստացան համապատասխան ինքնաձիգները, ինչպե՞ս կիրառվեցին, ի՞նչ քանակի փամփուշտներ են օգտագործվել փաստերին ձեռք բերված փաստերի հիման վրա, պրն. Քոչարյանը նշեց, թե դա հիմք է տալիս մտածելու, որ ըստ էության, համապատասխան կառույցները փորձել են փաստահավաք խմբից կոծկել այնպիսի տեղեկատվություն, որը վերաբերում է օգտագործված սպառազինությանը: Փաստահավաք խմբից կոծկել են նաեւ այն անձի ինքնությունը (Արթուր Մաթեւոսյան), որը զինվում է ինքնաձիգով»:

*Տես էջ 3*

# «Մադրիդյան սկզբունքների» փոխարեն՝ «երեւանյան սկզբունքներ»

ՀԴԿ նախագահ **Արամ Գասպարի Սարգսյանի** գնահատմամբ «մադրիդյան սկզբունքների» մի քանի կետերի հրապարակումից հետո իրավիճակն օր օրի ավելի է սրվում: Ըստ նրա, կանխատեսումները դառնում են մտահոգիչ իրականություն: Այդ պատճառով նամակ են ուղարկել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ արտահայտելով արցախյան հիմնահարցի կարգավորման եւ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացի վերաբերյալ իրենց դիրքորոշումները: Արամ Սարգսյանը վստահ է, որ թեպետ հայկական կողմը հաստատակամ է բանակցություններ վարելու առանց նախապայմանների, այդուհանդերձ, թուրքական սցենարն այնպես է դասավորվում, որ երկու խնդիրների կարգավորմանը, որպես զուգընթաց ուղղություններ, հաղորդվի միանման արագություն:

Ըստ Սարգսյանի, այդ պատճառներից մեկը Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերի մեկտեղումն է, ինչից պարզ է դառնում, որ Հայաստանին եւ ԼՂՀ-ին կպարտադրվեն ռազմավարական բնույթի զիջումներ, որին մեծապես կնպաստի նաեւ «մադրիդյան սկզբունքների» կիրառումը: Ըստ նրա, փաստաթուղթը չպետք է անհարկի սրացումների առիթ հանդիսանա, մինչդեռ փաստարկներն այլ բան են ապացուցում: «Եթե տարածքների խնդիրը լուծվի Ադրբեջանին՝ յոթ շրջանների թեկուզ մի մասի վերադարձնելու ենթադրյալ տարբերակով, ապա անտեսվում է բուն հայկական այլ տարածքների պատկանելության փաստը, հաշվի չի առնվում նշված տարածքների ԼՂՀ վերահսկողության ներքո գտնվելու փաստը, որն ամրագրված է ԼՂՀ սահմանադրությամբ եւ ի չիք է դառնում ԼՂՀ պաշտպանվածության հուսալի մակարդակը», նկատում է դեմոկրատ գործիչը:

Նրա խոսքերով, տարածաշրջանում խաղաղարար ուժերի նախատեսվող ներկայությունը հղի է նոր վտանգավոր մարտահրավերներով: Հայաստանը, Ադրբեջանը, ԼՂՀ-ն, Իրանն ու էլի մի շարք պետություններ չեն համաձայնի տարածաշրջանում այն երկրների ուժերի հայտնվելուն, որոնց անկողմնակալության վերաբերյալ խիստ կասկածներ ունեն: «Արցախյան հիմնահարցի կարգավորմանը կոչված «մադրիդյան սկզբունքների» փոխարեն պետք է մշակվեն եւ ներկայացվեն հայեցակարգային նոր մոտեցումներ: Ոչ իրատեսական «մադրիդյան սկզբունքները» պետք է փոխարինել «երեւանյան սկզբունքներով», բանակցությունները նոր հունով վարելու համար», Դեմոկրատական կուսակցության գրասենյակում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ասաց Արամ Սարգսյանը:

Դեմկուսի նոր հայեցակարգն առաջարկում է մինչեւ բանակցային գործընթացի ավարտը համաձայնագիր կնքել, համաձայն որի հակամարտության երկրները կհրաժարվեն թշնամական քարոզչությունից եւ փոխադարձ վստահության մթնոլորտ կստեղծեն: «Առաջարկում ենք տնտեսական համագործակցությունը խթանող ծրագրեր իրականացնել, որոնք քաղաքական երկխոսության բազա կստեղծեն», նկատեց Արամ Սարգսյանը: Նա հավելեց, որ Ադրբեջանն ամենայն հավանականությամբ միանգամից չի ընդունի վերոնշյալ առաջարկները, բայց «դա միակ ճիշտ ուղին է, եւ Ադրբեջանը եւս մեկ անգամ ցույց կտա այդ երկրի անպատրաստ լինելը հակամարտության խաղաղ կարգավորմանը»: Անդրադառնալով ադրբեջանական կողմի սպառնալիքներին ու պատերազմը վերսկսելու մտորումներին, Սարգսյանը նախ փաստեց, որ պատերազմող երկիրը այդքան հաճախ չի խոսում պատերազմի մասին, այնուհետեւ հիշեցրեց Վրաստանի նախագահ Սաակաշվիլու օրինակը՝ կանխատեսելով, որ Ադրբեջանը Հայաստանի հետ պատերազմ սկսելու ժամանակ կկրկնի Վրաստանի ճակատագիրը: «Ադրբեջանը, ինչպես Վրաստանը, դրսից օգնություն ստանալու հույս ունի: Ադրբեջանը կպարտվի պատերազմում, ինչպես եւ առաջին անգամ: Բացի այդ, միջազգային հանրությունը թույլ չի տա, որ այդ պատերազմը մեկ օրից ավելի տեւի», նկատեց Սարգսյանը՝ հավելելով, որ հնարավոր պատերազմը կհեղինակազրկի Ադրբեջանին:




## «Չպետք է թույլ տալ, որ վրացիներն այդպես լկտիանան»

«Վրացիները, իրենց սովորության համաձայն, մեկ-մեկ այնպիսի անհասկանալի քայլեր են կատարում, որ մնում ես զարմացած», այսպես արձագանքեց վրացի սահմանապահների գործողություններին Արամ Սարգսյանը: «Գուցե ընդհանուր համատեքստում իրենց քաղաքականությամբ փորձում են հայերին ճնշել: Կարծում եմ, որ վրացիների կարողություններն ու հնարավորություններն այնքան սահմանափակ են, չնայած ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի ահռելի օգնություններին, որ խոսել նրանց հետ՝ պատերազմ վարելու կարողությունների մասին, անհեթեթություն է», շարունակեց ՀԴԿ ղեկավարը հավելելով. «Չպետք է թույլ տա, որ վրացիներն այդպես լկտիանան»:

## «Գնալ Թուրքիա, որպես ֆուտբոլի երկրպագու»

Անդրադառնալով հոկտեմբերի 14-ին կայանալիք Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպմանը, Արամ Սարգսյանը գնալ-չգնալու երկու տարբերակներն էլ իրատեսական է համարում: Ըստ նրա, Սերժ Սարգսյանը պետք է Թուրքիա գնա որպես երկրպագու, դիտի խաղն առանց բանակցությունների ակնկալման ու վերադառնա Հայաստան: «Սակայն հանգիստ կարող է ասել, որ չի կարող գնալ Թուրքիա եւ մեր հավաքականին կերկրպագի Երեւանից», հավելեց նա:

Թե որ տարբերակն է ավելի նախընտրելի՝ դեմոկրատն առաջարկեց սպասել մինչեւ սեպտեմբեր ամսվա վերջն ու իրադարձություններից առաջ չընկնել: Ըստ նրա, Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ չի կարող հարաբերությունների զարգացում լինել, որովհետեւ «սառել է Թուրքիայի հետաքրքրությունը այդ գործի նկատմամբ: Ոչ թե Ադրբեջանի պատճառով, այլ երբ Անգելա Մերկելն ու Նիկոլա Սարկոզին հայտարարեցին, որ դեմ են Թուրքիայի եվրոինտեգրմանը», նկատեց նա:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Գեղեցկությունն ու կանացի հմայքը կփրկե՞ն ...

*1-ին էջից*

Երեւի: Հակառակ դեպքում ի՞նչն է Իլհամ Ալիեւին ստիպում դարձյալ «զորաշարժել կանանց գունդը» եւ «առաջին գիծ ուղարկել» խորհրդարանի պատգամավոր Գյուլթեքին Հաջիեւային, որը վերջին ժամանակներս իրեն կնքել է Հաջիբեյլի՝ հավանաբար ենթադրելով, թե այդքան «ինչեղ եւ ներշնչող» ազգանունը նույնպես կարող է «դիվանագիտական զինանոցի տարր» դառնալ:

Իսկ ի՞նչ է ասում Հաջիեւա-Հաջիբեյլին:

Շատ պարզ մի բան. մադրիդյան հին ու նոր առաջարկություններն անընդունելի են, քանի որ չեն կանխորոշում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակն Ադրբեջանի կազմում: Շատ հասկանալի է ասված. Ադրբեջանը պատրաստ չէ մադրիդյան սկզբունքների հիման վրա համաձայնության գալ:

Բայց ինչո՞ւ այդ մասին Գյուլթեքինն է ասում, այլ ոչ թե՝ Նովրուզը: Որովհետեւ Նովրուզին հանձնարարվել է «կանանց» գնդի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Հաջիեւա-Հաջիբեյլիի միջոցով ակնարկել, որ «կողմերն սպասում են, թե ով առաջինը «ոչ» կասի»:

Ահա եւ՝ դիվանագիտություն:

Ստացվում է, որ Նովրուզ Մամեդովի կազմակերպած թատրոնը, որի բոլոր դերակատարները վերջին շրջանում նույնն էին կրկնում, թե «Հայաստանը որեւէ ելք չունի, բացի իր արտաքին քաղաքականության պարտությունն ընդունելուց», մի նպատակ է հետապնդել: Այն է՝ հնարավորինս անկայունություն հրահրել հայ իրականության մեջ, անվստահություն սերմանել իշխանությունների հանդեպ, որպեսզի նրանք ստիպված լինեն առաջինը «ոչ» ասել մադրիդյան սկզբունքներին:

Այդ «գերխնդիրը», սակայն, չի լուծվել, քանի որ հայ հանրությունը եւ քաղաքական շրջանակները կարողացան դիմանալ փորձությանը: Եվ հիմա Ադրբեջանն է երկմտանքի մեջ՝ ասե՞լ «ոչ», թե՞ մի փոքր էլ սպասել: Բայց, կարծես, ելք չի գտնվում: Հենց այդ է պատճառը, որ Գյուլթեքին Հաջիեւան ստիպված է հերթական անգամ փրկել «տղամարդ իշխանության» դեմքը:

Տպավորություն կա, որ Ադրբեջանի առաջին տիկնոջ մասին տեղեկատվական աննախադեպ առատությունն էլ մի ակնարկ է միջազգային հանրությանը. «Ավելի լավ է գործ ունենալ Մեհրիբան Ալիեւայի հետ»: Միեւնույն է՝ Ադրբեջանում վճռական խոսքը պատկանում է կանանց: Իսկ գուցե հեռու չէ՞ այն օրը, երբ բանակցությունների սեղանի շուրջը կհայտնվի առաջին տիկին Մեհրիբանը: Այդ դեպքում, հավանաբար, Էլմար Մամեդյարովին էլ կփոխարինի Գյուլի՞ն: Մեկը՝ «հմայք», այդպես է ադրբեջաներենից թարգմանվում առաջին տիկնոջ անունը, մյուսը՝ «վարդ»:

Իսկ, ի՞նչ կանի հայ դիվանագիտությունը, եթե մի օր Բաքվում որոշեն, որ «միայն գեղեցկությունն ու կանացի հմայքը կփրկեն Ադրբեջանը»:

Ա. Մ.

ԿԱՐԾԻՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐՆ ՈՒՆԵՆ

# «ՀԱԿ-ը, «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն պետք է կոալիցիա կազմեն...»



**Ըստ Մարքսիստական կուսակցության նախագահ Դավիթ Հակոբյանի՝ Արցախը պետք է դառնա միակ, գլխավոր դիվանագիտական սուբյեկտ, իսկ Հայաստանը պետք է դուրս գա դիվանագիտական գործընթացներից:**

**Դ. Հակոբյանը համոզված է, որ Ռուսաստանը երկակի ստանդարտներ կիրառեց եւ «երդմնազանց» եղավ հայերի նկատմամբ, երբ ճանաչեց Հարավային Օսիայի եւ Աբխազիայի անկախությունը: Մարքսիստական կուսակցության առաջնորդը նշեց, որ Ռուսաստանը պետք է ճանաչեր նաեւ Արցախի անկախությունը՝ հաշվի առնելով, որ Հայաստանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է:**

**Ըստ մարքսիստի, Արեւելքում տեր ու տիրականը Ռուսաստանն է, եւ հենց նա է ճանաչում երկրների ինքնորոշումը՝ կլինի միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակով, թե ինքնորոշում՝ բարձր ինքնավարության կարգավիճակով:**

**Իսկ եթե Հայաստանը, ըստ Դ. Հակոբյանի, ցանկանա ինքը շարունակել բանակցային գործընթացը՝ ԼՂՀ-ին ուղղակի մասնակից դարձնելով «որպես երկրորդական սուբյեկտ», ապա հարկավոր է պահանջել բանակցող հիմնական սուբյեկտի՝ նախագահի հրաժարականը:**

**Դ. Հակոբյանը նշում է նաեւ, որ ՀԱԿ-ը, «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն պետք է կոալիցիա կազմեն ու միավորվեն հասկապես մեկ կարեւոր՝ արցախյան հիմնահարցի դիվանագիտական նոր սկզբունքների հարցերով:**

**Ն. Մ.**

# Նիկոլ Փաշինյանի կալանքի ժամկետը երկարաձգվեց եւս 2 ամսով

**Այդպիսի որոշում է կայացրել Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը՝ դրա համար հիմք համարելով նախաքննական մարմնի տրամադրած 10-օրյա ժամկետը Փաշինյանի փաստաբաններին՝ գործի նյութերին ծանոթանալու համար: Դատարանը մերժել է Փաշինյանի փաստաբաններ Արթուր Գրիգորյանի եւ Տիգրան Աթանեսյանի միջնորդությունները՝ գրավի դիմաց նրան ազատելու վերաբերյալ:**

# Մաքսային արտոնություններ տրվեցին 4 սարքաշինական ընկերությունների

**Կառավարության որոշմամբ երեկ չորս սարքաշինական ընկերությունների՝ «ԱՄԱ կոմպրեսորին», «Ավտոգեն-Մ»-ին, «Սարատովսկայա գեներատորնայա կոմպանիայի» Հայաստանում գտնվող թիվ 1 մասնաճյուղին եւ «Երֆրեզին» թույլատրվել է երկարաձգել նրանց ներմուծած ապրանքների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմի ժամկետները: Ինչպես նշեց հարցը ներկայացնող էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, այս արտոնությունը հնարավորություն կտա ընկերություններին պահպանելու եւ ավելացնելու արտադրության տեմպերը: Դրա շնորհիվ այդ ընկերությունները կկարողանան իրականացնել իրենց արտադրանքի արտահանման ծրագրերը՝ համաձայն գործընկերների հետ արդեն կնքված պայմանագրերի: Միաժամանակ նախարարը նշեց, որ ընկերությունները մինչեւ տարվերջ կկարողանան կատարել իրենց հարկային պարտավորությունները, եւ այս արտոնությունները նրանց հնարավորություն կտան խուսափելու տույժ ու տուգանքներից: Վարչապետ Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ այս որոշումները բխում են կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ծրագրի տրամաբանությունից:**

**Մեկ այլ՝ «Այ Ջի Վի Այ» ընկերության համանման դիմումը, անբարեխիղճ աշխատանքի պատճառով, մերժվել է, քանի որ, ինչպես նշեց վարչապետը, ընկերությունը չգրանցված գործունեություն էր իրականացնում եւ չէր կատարում իր հարկային պարտավորությունները պետության նկատմամբ:**

**Ա. Մ.**

# Բյուջետային երաշխիք՝ եւս մեկ կառուցապատողի

**Երեկ եւս մեկ՝ 6-րդ կառուցապատող ընկերությունը կառավարության որոշմամբ ստացավ բյուջետային երաշխիք: Երեւանի Աբովյան 2/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքն ավարտին հասցնելու նպատակով «Հայբիզնեսբանկից» վարկային միջոցներ ներգրավելու համար, «Ավո Ֆ.Մ.Հ.» ՍՊԸ-ին տրամադրվեց 2 մլն դոլարին համարժեք դրամի բյուջետային երաշխիք: Որպես բյուջետային երաշխիքի վճարումից ծագող հետադարձ պահանջի ապահովման միջոց, ընկերության հետ կնքվելու է գրավի պայմանագիր՝ ընկերության կողմից կառուցվող շենքի տարածքները հողի նկատմամբ բաժնային իրավունքով հանդերձ գրավ ընդունելով:**

**Ա. Մ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 8/27/2009 10:40 PM Page 1



# ԱՄՆ դատարանի վճիռը կարող է խոչընդոտել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին

ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի պատասխանատու **Կիրո Մանոյանը** երեկ որոշ մանրամասներ հաղորդեց ԱՄՆ դաշնանային դատարանի վճռի մասին, որով հակասահմանադրական է ճանաչվել 2000 թվականին Կալիֆոռնիայում ընդունված օրենքը: Հիշեցնենք՝ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին հնարավորություն էր տրվում ապահովագրական ընկերություններից դատական հայցերով պահանջելու իրենց հարազատների ապահովագրական գումարը:

Այդ օրենքը մինչեւ 2010 թվականն իրավունք էր տալիս դատական գործեր հարուցելու Կալիֆոռնիայի դատարաններում: Այս օրենքի



հիման վրա էր, որ «Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերությունից հնարավոր եղավ ստանալ մոտ 20 մլն դոլար, իսկ ֆրանսիական AXA ապահովագրական ընկերությունից էլ դատարանի վճռով 17 մլն դոլար պետք է հասնի զոհերի ժառանգներին: Գերմանական 3 ընկերության դեմ այսպիսի հայցեր կային, հենց նրանցից մեկն էր դիմել՝ բողոքարկելու այդ օրենքի սահմանադրականությունը: Առաջին բողոքը եղել էր ի նպաստ հայկական կողմի, դատավորն ասել էր՝ առարկությունները հիմք չունեն (նախ կասկածի տակ էին առնում, որ դիմողներն իսկապես զոհերի ժառանգներն են, իսկ ապահովագրական ընկերությունը ժառանգորդ պե՞տք է համարվի, թե՞ ոչ, եւ երրորդ՝ սահմանադրականության հարցը): Ահա այդ վճռի բողոքարկումն էր վերաքննիչ դատարանում 2008 թվականի դեկտեմբերին, իսկ վճիռն արձակվեց անցած հինգշաբթի՝ օգոստոսի 20-ին: Կ. Մանոյանը պատմեց, որ սովորաբար վերաքննիչ դատարանի 29 դատավորներից գոնե 10-12 հոգով են վճիռ արձակում, բայց այս վճիռը կայացրել է 3 դատավոր, ընդ որում վճռի կողմն են եղել միայն 2-ը, 1-ը դեմ է եղել նրանց տեսակետին: Այդ վճիռը հիմնվում է այն բանի վրա, որ արտաքին քաղաքականություն վարող վերջին երկու նախագահները համաձայն չեն եղել «ցեղասպանության ճանաչում» տերմինին, դա նշանակում է, որ ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանությունը չի ճանաչում եւ Կալիֆոռնիայի կողմից ցեղասպանության ճանաչումը հակառակ է երկրի արտաքին քաղաքականությանը, ուրեմն պետք է հռչակվի հակասահմանադրական: Հայցվոր կողմի առարկությունն այն էր, որ Կալիֆոռնիայի նահանգային դատարանը գերազանցել է իր իրավունքները, սկսել է արտաքին քաղաքականության մասին խոսել, որ խնդրո առարկա օրենքում այդ երկու բառերը կան (հայցում էլ միայն այդ մի տարբերությունը կա՝ «Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների հայց»): Վերաքննիչը ճիշտ է համարել նահանգային դատարանի առարկությունը, որ երկու նախագահները ոչ միայն խուսափել են այդ բառերն օգտագործելուց, այլ նաեւ դեմ են եղել, որ Կոնգրեսը բանաձեւ ընդունի, մեկնաբանել են, որ այդ քաղաքականությունը ենթադրում է, թե նահանգներին արգելվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչել: 2008-ի դեկտեմբերին, երբ հայցը ներկայացվել է վերաքննիչին, 39 նահանգներ ճանաչել էին Հայոց ցեղասպանությունը, ըստ Մանոյանի, վերաքննիչի դատավորները նույնիսկ հարցականի տակ էին դրել՝ արդյո՞ք նրանք ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, եւ գտել են, թե Կալիֆոռնիայի նահանգը գերազանցել է իր իրավասությունները, հակասահմանադրական է այս օրենքը եւ այն պետք է բեկանվի. «Այս վճիռը թուրքական շրջանակների կողմից վստահաբար օգտագործվելու է, որպեսզի մնացած բոլոր նահանգների կողմից ճանաչումները փորձեն դատական վճիռներով չեղյալ կամ հակասահմանադրական համարել եւ նույնիսկ այս վճռի հիման վրա կարելի է արգելել Կոնգրեսին որեւէ բանաձեւ ընդունել, որտեղ ցեղասպանությունը ճանաչվի», նկատեց Կ. Մանոյանը: Այս կարծիքին դեմ դատավորը համարել էր, սակայն, որ Կալիֆոռնիայի դատարանն իր իրավասությունների մեջ է եղել, իսկ «Հայոց ցեղասպանություն» բառերը ԱՄՆ նախագահների քաղաքականության մեջ ոչ մի տեղ չեն արգելվում, այլ հարց, որ նրանք խուսափել են այդ բառերն օգտագործել:

Այսպիսով, մասնավոր հայցի արդյունքում ստեղծվել է մի նախադեպ, որի հետեւանքների դեմ արդեն հավաքական պետք է պայքարի ԱՄՆ հայ համայնքը: Հայկական կողմը ներկայացնող փաստաբանները այս մի դեպքում մասնավոր պրակտիկայով զբաղվող մարդիկ են, եւ որեւէ համայնքային կառույց նման որոշումների մասնակից չէ: Ըստ Կ. Մանոյանի՝ ինչ-որ տեղ նաեւ նրանց պատասխանատվությունը կա նրանում, որ, ասենք, անհրաժեշտ ձեւով չի ներկայացված այն փաստը, թե Քլինթոնը եւ Բուշը թեեւ ցեղասպանություն բառը չեն օգտագործել, բայց, օրինակ, Ռեյգանն օգտագործել է, կամ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը ցեղասպանությունը ճանաչող մի քանի որոշումներ ունի: «**Ազգի**» դիտարկմանը պատասխանելով, թե ԱՄՆ Հայ դատի գրասենյակը կարող էր ժամանակին հետեւել ու համակարգել այդ խնդիրը, Կ. Մանոյանն արձագանքեց, թե Հայ դատի գրասենյակի թերացումն այստեղ չկա, վերջինս հիմա խորհրդակցում է փաստաբանների հետ, թե իրավական ի՞նչ քայլերի կարող են դիմել: Հիմնական հնարավորությունները իրավական եւ քաղաքական են. առաջինով կարելի է դիմել բողոքարկելու, որ հարցը քննեն ոչ թե 3, այլ ավելի մեծ թվով դատավորներով, իսկ որպես գործընթացի հետեւանք սա նախադեպ չդառնալու վճիռ ապահովել, մանավանդ որ ամերիկյան դատարանը նախադեպերի հիման վրա վճիռ կայացնող կառույց է: Եթե այս երկուսը ձախողվեն՝ տեսականորեն հնարավորություն կա դիմելու ՍԴ, որ շատ դժվար գործ է:

Քաղաքական ճանապարհը, որ իրավականին չի խոչընդոտում եւ Հայ դատի հանձնախումբն արդեն սկսել է, այն է, որ Սպիտակ տունը, նախագահ Օբաման հասկացնեն՝ ապրիլի 24-ին ցեղասպանություն բառն օգտագործելուց խուսափելը չի նշանակում արգելել որեւէ նահանգի՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը. համայնքն այս ուղղությամբ է աշխատելու: ԱՄՆ Հայ դատի հանձնախումբն արդեն նամակ է ուղարկել Օբամային, որտեղ ասվում է, որ ցեղասպանություն բառի չօգտագործումն առիթ է տվել դատարանին՝ իր լիազորություններից դուրս նման եզրակացության գալ, ինչը փաստորեն մեծ հարված կարող է լինել ընդհանրապես ԱՄՆ-ում ցեղասպանության ճանաչմանը:

Արդյո՞ք սա թուրքական լոբբինգի հետեւանք է: Թուրքիայի դեսպանատունն անցած տարվա դեկտեմբերին նամակով դիմել է դատարանին՝ պահանջով այս օրենքը հակասահմանադրական ճանաչելու: Դատավորներն իրենց վճռի մեջ ասել են, որ անտեսել են այդ նամակը, թե իրականում անտեսե՞լ են՝ մեկնաբանության հարց է: Բայց ուղղակի ճնշման ապացույց չկա, այս կարծիքին էր ՀՅԴ-ականը:

Հայ-թուրքական հարաբերությունների վրա ճնշման փորձ սա կարելի՞ է համարել. «Չեմ ուզում հավատալ, որ դատարանը, հատկապես ԱՄՆ-ում, գործադիր իշխանության կողմից այդքան դյուրին նաեւ քաղաքական նպատակներով օգտագործվի, բայց որ ԱՄՆ -ի կողմից Հայաստանի վրա ճնշում կա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների գծով, անկախ այս դատարանի վճռից՝ այո՛, Հ. Քլինթոնի հեռախոսազանգն այդ մասին պետք է եղած լինի»: Մանոյանը կարծում է, որ Հայաստանը հենց հիմա պետք է արձանագրի, որ Թուրքիան կասեցրել է հարաբերությունները Հայաստանի հետ, եւ Թուրքիայի պատճառով հայ-թուրքական բանակցությունները ձախողվել են: Երբ այդ մասին հայկական կողմը չի հայտարարում՝ Թուրքիային հաջողվում է տպավորություն ստեղծել, թե իբր բանակցությունները շարունակվում են... ԵԱՀԿ համանախագահող երկրների կողմից էլ Հայաստանի վրա ճնշում կա, որպեսզի Ղարաբաղի հարցով ներկայացվելիք վերամշակված հիմնական սկզբունքներ կոչվածներին համաձայնություն հայտնվի. «Պետք չէ սպասել մինչեւ հոկտեմբերի 14-ը՝ այդ ասելու համար, վտանգներ կան, Ղարաբաղի հարցով ճնշումն այդ վտանգներից մեկն է, դա չէր լինի, եթե այս բանակցությունները չլինեին, որովհետեւ միջնորդները փորձում են մինչեւ հոկտեմբերի 14-ը ինչ-որ կեցվածք թողել...»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐՏԻ 1-Ի ՀԵՏՔԵՐՈՎ

## Փաստահավաքները դժգոհ են...

*1-ին էջից*

Խմբին հաջողվել է ճշտել անձի ինքնությունը, նրա հետ հանդիպելուց ստանալ բացատրություններ զենքը վերցնելու, ժամի եւ օրվա մասին: Այնուհետեւ պարզվել է, որ «ցերեկը՝ ժամը 13.00-15.00-ն ոստիկանական ուժերին բաժանվել են 18 ինքնաձիգներ, որի մասին տեղեկությունը խիստ գաղտնի էր պահվում», նշեց պրն. Քոչարյանը: Նա հիշեցրեց ժամանակավոր հանձնաժողովին, որ այս փաստը ուսումնասիրեն ու ներառեն իրենց վերջնական զեկույցում: Անդրադառնալով ինչեցված դիպուկահարի փաստին, նշեց, որ այն «պարունակում է բավականին հետաքրքիր առեղծված: Հենց այդ դիպուկահարը միակ անձն է, որը պետք է տեսած լիներ, թե ո՞վ կրակեց Տիգրան Աբգարյանի վրա: Այդ դիպուկահարին հատուկ քննչական ծառայության կողմից գաղտնավորեցին, որպեսզի մենք չկարողանանք նրա ինքնությունը ճշտել, Տ. Աբգարյանի մահվան հանգամանքները պարզել, ու զրկեցին մեզ այդ հնարավորությունից: Մենք ուսումնասիրություններից հետո եկանք այն եզրահանգման, որ Տ. Աբգարյանի վրա կրակել են շատ մոտ տարածքից, որը պարզ է եւ վերքի չափերից եւ փորձագետի տված եզրակացությունից»: Խումբը նաեւ պարզել է, որ Աբգարյանի համազգեստը, զրահաբաճկոնը, սաղավարտը չկան, եւ փորձագետը չի կարող ճշտել կրակողի հեռավորությունը, չկա դիպուկահարի ֆոտոռոբոտը: Այս եւ այլ փաստեր նշելով, պրն Քոչարյանը ժամանակավոր հանձնաժողովին հորդորեց ու նաեւ խնդրեց բոլոր իրենց զեկույցներում ներկայացված փաստերը մանրամասն ուսումնասիրել:

Ըստ պրն. Քոչարյանի, «ժամանակավոր հանձնաժողովը չունի տեսակետ: Ունի տեսակետ փաստահավաք խումբը, եւ ունեն տեսակետ այն մարմինները, որոնց աշխատանքների թերացումները ներառված են առաջին զեկույցի մեջ»: Անդրադառնալով Մելիք-Ադամյան փողոցի խճանկարին՝ նշեց. «Այդ վայրում եղել են ոչ ոստիկանական ուժեր եւ մեր ունեցած տեսանյութերում, լուսանկարներում հստակ ֆիքսված է ժամը՝ 16.47 եւ ՊՆ-ի տարբերանշաններով զինծառայողներ, մեքենաներն իրենց համարներով եւ ինքնաթափում նստած՝ զինվորականներ՝ ինքնաձիգերով»: ՊՆ-ից խմբին ուղարկվել է «հերքող փաստաթուղթ, նույն տիպի փաստաթուղթ են ստացել ոստիկանությունից ու նաեւ ազգային անվտանգությունից:

Պրն. Քոչարյանը հարցնում է. «Իսկ այդ դեպքում ովքե՞ր էին Մելիք-Ադամյան փողոցում զինված բանակային համազգեստով մարդիկ, եթե ուժային կառույցները հերքում են, որ դրանք իրենց ստորաբաժանումներն են: Նրանք հետո հնարեցին ինչ-որ Դաստակովի հրամանատարությամբ այնտեղ գտնված ստորաբաժանման մասին հեքիաթը», որը սակայն հօդս է ցնդել փաստահավաք խմբում Դաստակովի բացատրությունները լսելիս: Ըստ Քոչարյանի, Դաստակովը ոստիկանության զորքերի օպերատիվ վարչության պետն է, որը խմբին ասել է, թե իր ստորաբաժանումն է եղել այդ փողոցում, մոտ 20 մարդ, որոնց ինքը զենք է բաժանել իր մեքենայի բեռնախցիկից: «Այդ ամենը մենք ձայնագրել ենք: Եվ եթե այդ նյութը հանձնաժողովը ուսումնասիրած լիներ, ապա անմիջապես պետք է ուղարկեր դատախազություն քրեական գործ հարուցելու համար», ասում էր Անդրանիկ Քոչարյանը: «Ամբողջ քաղաքը գիտի, որ Մելիք-Ադամյան փողոցի վրա, երեկոյան, թաղային տղերքը (վերնիսաժի մոտ) համազգեստ են ստացել կամազից: Իսկ երբ գնում ենք այդ փաստերը ճշտելու, միանգամից խոչընդոտ է դրվում փաստահավաք խմբի առաջ»: Նա նաեւ նշեց, որ խումբը 2008-ի դեկտեմբերի 15-ին ՀԱԿ-ից ստացել է մի փաստաթուղթ, որում նշված են «հինգ բարձրաստիճան պաշտոնյաների եւ չորս պատգամավորների անունները՝ Վաչիկ Ղազարյան, Գագիկ Ծառուկյան, Սուրիկ Խաչատրյան, Լեւոն Սարգսյան, Գագիկ Բեգլարյան, Հովիկ Աբրահամյան, Առաքել Մովսեսյան, Մհեր Սեդրակյան, Սամվել Ալեքսանյան, որոնց մարտի 1-ին ՊՆ-ի թիկունքի ծառայության պահեստից տրամադրվել է 950 հատ երկու տեսակի զինվորական կոստյումներ եւ 140 գլխարկներ»: Պրն Քոչարյանը այդ փաստը ստուգելու համար կազմել է գործողության պլան, եւ խմբի հետ որոշել են մեկնել ՀՀ ՊՆ-ի թիկունքի վարչության իրային պահեստ: Սակայն նրանց առջեւ բոլոր դռները փակվել են ու թույլ չեն տվել պարզելու, թե ո՞ւմ անվամբ են դուրս գրվել 950 հատ զինվորական կոստյումներն ու 140 գլխարկները: Այնուհետեւ բազմաթիվ խոչընդոտների եւ իրենց ուսումնասիրությունների մասին զեկույցները աչքաթող անելու մասին փաստեր ներկայացնելու հետ տեղեկացրին, որ պատրաստվում են ժամանակավոր հանձնաժողովին ներկայացնել նաեւ 5-րդ զեկույցը, որը վերաբերելու է ուժային կառույցների՝ մարտի 1-ի գործողությունների իրավաչափությունը, սկսած առավոտյան Ազատության հրապարակի գործողություններից: Իսկ 4-րդ զեկույցը նրանք օգոստոսի 24-ին հանձնել են հանձնաժողովին եւ սպասում են արձագանքին:

«**Ազգը**» հեռախոսով փորձեց ԱԺ-ի ժամանակավոր հանձնաժողովի նախագահ **Սամվել Նիկոյանից** որոշ պարզաբանումներ ստանալ փաստահավաք խմբի ներկայացրածի մասին: Պրն. Նիկոյանը ասաց. «Օգոստոսի 28-ին հանձնաժողովի նիստ ենք հրավիրել, եկե՛ք, մասնակցե՛ք եւ ձեր բոլոր հարցերի պատասխանը կստանաք»:

## Արձագանք «Աշտարակ կաթից»

«**Ազգ**» օրաթերթում ս.թ. օգոստոսի 27-ին հրապարակված «Կաթը ջրից էժան է» հոդվածում (հեղինակ՝ Ռուզան Սարգսյան) հրապարակվել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն «Աշտարակ-կաթի» կողմից Բերդի տարածաշրջանում կաթի մթերման գների մասին: Ըստ հրապարակման, ընկերությունն իբր 1 լիտր 3.8 % յուղայնության կաթը ֆերմերներից ընդունում է 80-85 դրամով, իսկ նորմայից բարձր յուղայնություն ունեցող կաթը՝ 90-95 դրամով: Այդ կապակցությամբ հարկ ենք համարում ներկայացնել «Աշտարակ-կաթի» կողմից կաթի մթերման իրական սակագները, որոնք էապես տարբերվում են հոդվածում նշված սակագներից:

«Աշտարակ-կաթը», Ագարակի եւ Երեւանի Քաղաքային կաթի գործարանի համար մթերվող բազիսային 3,6% յուղայնության կաթի 1 լիտրի դիմաց վճարում է 105 դրամ, իսկ Ճամբարակի պանրագործարանի համար մթերվող 1 լիտր կաթի դիմաց՝ 95 դրամ:

Ինչ վերաբերում է Բերդի տարածաշրջանում մթերվող կաթի գներին, ապա «Աշտարակ կաթը» 1 լիտր բազիսային՝ 3,6 % յուղայնության կաթի դիմաց պատրաստակամություն է ցուցաբերել վճարելու ֆերմերներին 100 դրամ, եթե ֆերմերները իրենք հոգան կաթի տեղափոխման ծախսը եւ 95 դրամ, եթե ընկերությունն ինքը զբաղվի կաթի տեղափոխման գործընթացով:

Սակայն այս տարի այդ տարածաշրջանից ընդամենը մեկ անգամ կաթ են հանձնել միայն Վարագավանի ֆերմերները: Կաթի մթերումից նրանց հրաժարվելու պատճառները հասկանալու համար ֆերմերների հետ հանդիպել են «Աշտարակ-կաթի» ներկայացուցիչները: Ֆերմերները պատճառաբանել են, թե կաթի հանձնման գինը ցածր է եւ նրանք գերադասում են 1 լիտրը՝ըստ իրենց 150-200 դրամով (գները ճշտված չեն) վաճառել Իջեւանում եւ Բերդում:

Վերջերս, հուլիս ամսին, Բերդի տարածաշրջանի ֆերմերների հետ հանդիպել է «Կանաչ արահետ» ՀԿ տնտեսագետ-խորհրդատու Ռաֆայել Սարուխանյանը՝ պարզելու համար, թե ինչո՞ւ մինչ օրս ֆերմերները Նորաշենի մթերման կետին կաթ չեն հանձնում: Ֆերմերների մի մասը նրան պատասխանել է, որ կաթը պատրաստ է հանձնել ոչ պակաս, քան 150 դրամով, մյուս մասը՝ 110-120 դրամով, եւ ընդամենը ֆերմերների մի փոքր մասը համաձայնել է հանձնել կաթը 90-100 դրամով: Վերջիններիս «Աշտարակ-կաթ» ընկերությունը պատրաստակամություն է հայտնել մթերելու կաթը:

ՏԱԹԵՎԻԿ ՂԱԲԱԶՅԱՆ
«Աշտարակ-կաթ» ՓԲԸ
հասարակայնության հետ կապերի
պատասխանատու

ԱԶԳ

## Տնտեսություն

# Սակավահո՞ղ է արդյոք Հայաստանը

## *Մեր ապաշնորհությունը փորձում ենք արդարացնել՝ Հայաստան երկիրը թերարժեք հռչակելով*

***Հայաստանաբնակներիս մի հատվածի մեջ մեր երկրի հանդեպ թերարժեքության զգացումը հիմնավորապես է արմատավորվել, մի այլ մասի մեջ այն ուրվագծվում է վերջին տարիներին. իմա՝ չկարողացանք «Ջերմուկ»-ով երկիրը պահել: Տարիներ շարունակ այս վիճակը աղճատում է մեր ազգային նկարագիրը, պատճառում բազմաբնույթ անցանկալի դրսեւորումներ: Ինչո՞ւ ենք այսչափ անտարբեր ու անփույթ մեր ինքնության հանդեպ. տողերիս հեղինակը ցանկություն ունի խնդրի շուրջ կիսվել «Ազգ»-ի ընթերցողների հետ:***

Թերարժեքության բարդույթը սկսվում է մեր երկրի տարածքի հանդեպ, իմ խոսքերով ասեմ, տարօրինակ պատկերացումից: Բացե՛ք ՀՀ-ին նվիրված որեւէ ձեռնարկ եւ կհանդիպեք՝ Հայաստանը սակավահող երկիր է: Այնուհետեւ գալիս է հայի քարից հաց քամելու ունակության գովերգը: Ծանոթացե՛ք, թե ինչ է փաստում ամիսներ առաջ ՀՀ գյուղնախարարության գիտատեխնիկական խորհրդի երաշխավորությամբ հրատարակված «Հայաստանի գյուղատնտեսությունը» վերլուծականը. էջ 20. «Հայաստանը սակավահող եւ քարերի երկիր է»: Թե ինչ հիմք ունի սակավահողության պնդումը, գրեթե չի նշվում. փոխարենը փաստվում է, որ գյուղատնտեսական օգտագործելի հողատարածությունները կազմում են հանրապետության տարածքի 70 տոկոսից ավելին, (2,1 մլն հա), իսկ վարելահողերը ընդամենը 15 տոկոսը. վարելահողերն այն տարածքներն են, որտեղ հնարավոր է առավելագույն արդյունավետ գյուղատնտեսական գործունեություն ծավալել: Օրինակ՝ Նորվեգիայում դրանք կազմում են երկրի 324 հազար քկմ-ի ընդամենը 3 տոկոսը: Նույնքան տոկոս են կազմում 757 հազար քկմ եւ 1 մլն քկմ տարածքներ ունեցող Չիլիի ու Եգիպտոսի վարելահողային հատվածները: Վերջինում 1 բնակչի հաշվով վարելահողը ընդամենը 370 քմ է: Վերադառնանք ՀՀ-ին. մեր մնացած 15 տոկոսի մասին մասնագիտական միտքը գրեթե չի նշում՝ հայերիս կողմնորոշելով դեպի խոպան ու աղակալած հողերը: Այնինչ այդ 15 տոկոսի մոտ 90 տոկոսը մեր անտառային հարստությունն է, մնացածը՝ ջրային տարածքները: Իսկ ուր մնացին խոպան ու աղակալած հողերը. մասնագետների ամենայն բծախնդրությամբ արած ուսումնասիրություններով պարզվել է, որ դրանք կազմում են ՀՀ տարածքի 0,03 տոկոսը: Շա՞տ է, թե՞ քիչ 1 բնակչի հաշվով 6500 քմ գյուղատնտեսական օգտագործելի եւ 1500 քմ վարելահողային ռեսուրսը մեր բնակչության կենսագործունեության համար: Մասնագիտական միտքը Հայաստանը սակավահող երկիր է տարբերակով կանխավ բացասական դիրքորոշում է ամրագրում, հիմք դնելով մեր երկրի թերարժեքության գնահատականի հաստատմանը, որի եզրահանգումը մեկն է՝ տարածքն ի զորու չէ ապահովելու բնակչության պարենային պահանջարկը: Ինչքանո՞վ է այս ամենը բարոյական, համահունչ մեր ազգային խնդիրներին: Կարծես ՀՀ տարածքում չէ 660.000 հա զբաղեցնող Արարատյան դաշտը, 60.000 հա տարածքով Շիրակի դաշտը, որը հնուց փառաբանվել է որպես հացահատիկի շտեմարան: Խնդիրը փորձենք դիտարկել ճիշտ մեր տարածքն ունեցող, սակայն երբեւէ փոքր երկրների շարքը չդասվող Բելգիայի եւ երկիր մոլորակի ամենաշատ բնակչությունն ունեցող Չինաստանի օրինակներով, ուր բնակիչներին մտահոգող պարենային ապահովության ու անվտանգության հարցերը լուծված են առավելագույն արդյունավետությամբ:

Բելգիայի 30 հազար քկմ ընդհանուր տարածքից վարելահողային է 27 տոկոսը, 1 բնակչին բաժին է ընկնում 750 քմ վարելահող, մեր ցուցանիշի ուղիղ կեսը: Նկատենք, որ 50-րդ հորիզոնականից վերեւ գտնվող այս երկրում գյուղատնտեսական տարվա ընթացքում հազիվ 1 բերք է ստացվում, մեր մի շարք շրջանների 2-3-ի դիմաց: Հողը 2-3 բերք է տալիս նաեւ Չինաստանի որոշ շրջաններում, ուր 1 բնակչի հաշվով վարելահողը կազմում է 1000 քմ: Բայց ուր Բելգիայի ու Չինաստանի պարենային ապահովությունն ու անվտանգությունը. ուր՝ ՀՀ-ինը, երբ անգամ 1-2 օրով Սեւ ծովի նավահանգիստների հետ մեզ կապող երկաթուղում երթեւեկի դադարեցումը համապետական խուճապի է հանգեցնում, հերթական պատճառ հռչակվում մեր տարածքի թերարժեքության հաստատման համար:

Հայ հանրության որոշակի հատված խնդրի իր տարբերակն ունի. հայոց հողը լիարժեք է, մեր վերաբերմունքն է թերարժեք: Երբ հողին պահանջվող բարեհոգությամբ չես վերաբերվում, նրան միայն քո պահանջներն ես պարտադրում, նա տրտնջում է, դա ցուցադրում ի տես բոլորի: Մեկ խաղող մշակողին է ձեռնունայն թողնում, մի այլ անգամ՝ ծիրանի այգիներ ունեցողին, տեսար՝ լոլիկ ու կարտոֆիլ մշակողին չի օգնում եւ այսպես շարունակ: Աշխարհին ալկոհոլային խմիչքով ու ծխախոտով ներկայանալու մեր նպատակասլացությունը մինչ այժմ լավ հանգրվանի չի հասցրել: Իսկ ի՞նչ են անում արդեն հիշատակված Բելգիայում ու Չինաստանում, երկիր մոլորակի առնվազն մի 100 երկրում. իրենց պարենային ապահովության գյուղքաղաքականությունն են վարում, որի հիմքը կաթնամսամթերքների արտադրության ծավալումն է: Այն իրականացվում է պարզ մի գործընթացի շնորհիվ. բուսաբուծությունը համարեցվում է անասնապահությանը: Կայացած գյուղատնտեսություն ունեցող երկրներում հարաբերակցությունը 1:2-ի է, ՀՀ-ում հակառակը՝ 2:1-ի. 400 մլրդ դրամի բուսաբուծության արտադրանք ենք թողարկում, 200 մլրդ դրամի՝ անասնապահական: Կոնկրետ Բելգիայում գյուղհողատարածքների 2/3-ը հատկացվում է կերային կուլտուրաներին: Կարծես նույն կերպ են վարվում Չինաստանում. բրնձի իրենց պահանջը բավարարելուն զուգահեռ 160-ական մլն տոննա ցորեն ու եգիպտացորեն են մշակում: Հացահատիկային այս մշակաբույսերը լիարժեք անասնակեր օգտագործելու շնորհիվ է, որ հիշատակված երկրները լուծել են իրենց հիմնական պարենապահանջարկների՝ կաթնամսամթերքների բավարար արտադրությունը, որով էլ հարազատ երկրները պաշտելի տարածքներ են դարձել: Եվ սա այն պարագայում, երբ Բելգիայի որոշ տարածքներ գտնվում են օվկիանոսից ցածր նիշում, իսկ Չինաստանի մի հսկայական մաս Գոբի անապատն է զբաղեցնում:

Ցավոք, լրագրային էջը այն տարածքը չէ, ուր կարելի է հիմնախնդիրը մանրամասնել. հանրությունը ակնկալում է մասնագիտական մտքի գնահատականը:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

---

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀՈԳՍԵՐ

# «Մեր ուզածը ո՛չ փող է, ո՛չ էլ պաշտոն»

## *Քաղսեցիները ջրի կարոտ են մնացել*

**Առաջին հայացքից Քաղսիի առօրյան ոչնչով չի տարբերվում այլ փոքրիկ գյուղերի առօրյայից: Այստեղ էլ առավոտյան նախիրը բարձրացնում են սար, վար ու ցանք անում, ծառ ու ծաղիկ մշակում ու ապրում օրվա աշխատածով: Գյուղում աշխատանք չկա: Երիտասարդները կա՛մ բանվորություն են անում, կա՛մ էլ մեկնում արտասահման: Այս տարի Ռուսաստանում գործ ճարողների թիվը զգալիորեն կրճատվեց, գյուղի տղամարդիկ մնացին գործազուրկ: Ի թիվս բազմաթիվ չլուծված խնդիրների, գյուղացիներին ամենից շատ մտահոգում է խմելու եւ ոռոգման ջրի**



**բացակայությունը: Խմելու ջրի աղբյուրը գտնվում է գյուղի կենտրոնում: Ծայրամասերում ապրող բնակիչները ստիպված են օրական մի քանի անգամ գյուղում վեր ու վար անել՝ տան անդամներին գոնե խմելու ջրով ապահովելու համար:**

**Քաղսեցու միակ ապրուստը հող մշակելն է: «Գարնանը խոտ ենք ցանել, կարտոֆիլ, կաղամբ տնկել, բայց ջուր չկա, որ ջրենք, կարողանանք վաճառել, գոնե ձմռանը յոլա գնանք: Լոբի ենք ցանել, բայց շոգից պառկել են, դեղնել: Մնացել ենք շվարած», դժգոհում են գյուղացիները:**

**«Անցյալ տարի խոտ էի ցանել, բայց ջուր չկար, չորացավ, խեղճ անասունը ձմռանը սոված մնաց: Էս տարի նույն պատմությունն է: Ամեն տարի խոստանում են, որ էս գարնանը ջուրը կլինի, բայց բոլորն էլ թքած ունեն մեզ վրա, չեն ասում՝ էստեղ մարդիկ են ապրում, մի բանով էլ նրանց օգնենք», խմբված իրենց խնդիրներն են պատմում քաղսեցիները:**

**«Բոլորս էլ մեծ ընտանիքի տեր ենք, սեպտեմբերը եկավ, ո՛չ պայուսակ ենք գնել, ո՛չ հագուստ ու տետր: Չգիտենք, թե էս տարի ոնց ենք գազի վարձը մուծելու: Աշխատանք չկա, գումար չկա, բայց ամեն օր դուռը թակում են ու գազի, լույսի, հողի վարձ ուզում: Մի հարցնող լինի, որ էդ հողն ինձ օգուտ չի տալիս, ինչո՞ւ պետք է վարձ մուծեմ: Բայց ասում են, դե, պետության հանդեպ պարտքն է, իսկ պետությունը ե՞րբ է իր պարտքը կատարելու», զայրանում են գյուղացիները:**

**Նրանք հավաստիացնում են, որ գյուղապետը տեղյակ է, բայց «մասը մասին չի խփում, մի բան չի ձեռնարկում»: «Ասել ենք, խնդրել, բայց օգուտ չկա: Նա կարծես էս գյուղից չլինի: Եկավ խոստումներ տվեց ու մոռացավ, որ դրանք կատարելու վախտն էլ պետք է գա», պատմում են քաղսեցիներն ու ճարահատյալ սպասում, թե որ բարերարը կլսի ու կարձագանքի իրենց խնդրին:**

**«Լրբի, մարդասպանի երկիր է դարձել: Կառավարությունը, խորհրդարանը չեն հետաքրքրվում գյուղացու խնդրով: Մեր ուզածը ո՛չ փող է, ո՛չ պաշտոն, ո՛չ էլ ասում ենք՝ եկեք, մեզ պահեք, մենք չաշխատենք: Ընդամենը խնդրում-աղաչում ենք, որ մի երկու խողովակ բերեն, նորմալ սարքեն, ջուր լինի, հող վարենք, արտ մշակենք: Դրանից պետությանն էլ օգուտ կլինի», ասում են գյուղացիները, բայց վստահ են, որ էլի մնալու են կոտրած տաշտակի առաջ: Հարցը բարձրաձայնվում է արդեն մի քանի տարի, սակայն վերեւներում խնդրով հետաքրքրվող չկա:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Քաղսի-Երեւան**

---

# Մարդի՛կ, բարի եղեք

***Ինչ ինձ է վերաբերում, ինձ համար միշտ էլ ծանր է եղել տեսնել, թե ինչպես են հետապնդում ու սպանում անմեղ, անպաշտպան եւ մեզ ոչ մի չարիք չպատճառած կենդանուն: Ես երբեք չեմ կարողացել հանգիստ նայել, թե ինչպես է տանջահար եղնիկը, հազիվ շնչելով եւ ուժասպառ, հետ դարձել ու հանձնվել հալածողներին՝ արցունքներով նրանցից գութ աղերսելով... Դա ինձ միշտ անտանելի տեսարան է թվացել:***

*Միշել Մոնտեն*

«Շատ մեծ դժվարությամբ եմ պատմելու եւ չգիտեմ՝ կկարողանա՞մ արդյոք ավարտել պատմությունս:

Ախր նա փոքր էր, տակավին ցեղատեսակի շնիկ էր: Եղնիկի էր նմանվում: Շատ գեղեցիկ շուն էր: Ութ տարի ապրեց մեզ հետ: Իմ եւ ընտանիքիս ուրախությունն էր: Առաջինը նա էր տան անդամներին իմաց տալիս իմ գալու մասին: Բավական էր՝ լսեր մեքենայի ձայնը: Զարմանում էին, որ բակ մտնող մեքենաներին ուշադրություն չէր դարձնում: Կինս եւ տղաներս ասում էին, որ երբ մոտենում էր իմ աշխատանքից վերադառնալու ժամը, նա նստում էր պատուհանի գոգին եւ սպասում... Այդպես ութ տարի շարունակ, մինչեւ եկավ այդ չարաբաստիկ օրը: Դժվար է ինձ համար պատմել, այն, ինչ հիմա կլսեք (ես չէի ընդհատում, հարցեր չէի տալիս - Մ.Շ.):

Կնոջս մոտ հայտնաբերվեց էխինակոկ, այն էլ գլխի եւ թոքերի վրա... Ասացին, որ շունն է պատճառը... Պետք է ստուգվեին նաեւ ընտանիքիս անդամները ու հարազատներս, այսինքն՝ նրանք, ովքեր շփվել, սիրել են շանը... Մինչ կկատարվեր այդ գործընթացը, կլինեին բժշկական բոլոր հետազոտությունների պատասխանները, կնոջս անհապաղ վիրահատեցին... Ես, ինձ շրջապատող հարազատներիս համարյա թե հրամանով, պետք է շանս կորցնեի... Շատ լավ եմ հիշում, ձմեռն էր մոտենում, սարսափելի ցուրտ էր... Քաղաքից շատ հեռու տարա շանս... Համբուրեցի եւ մեքենայից իջեցրի... Շատ արագ էի վարում մեքենան, բայց նա վազում էր ու վազում... Զարմանում էի, թե այդքան ուժ որտեղի՞ց այդ փոքրիկ արարածին, որ հետ չէր մնում... Իսկ ես մեքենայի հայելու միջոցով հետ էի նայում... Աչքերս ամբողջությամբ արցունքներով էին լցված, համարյա թե ոչինչ չէի տեսնում... Բավականին հեռու գնալուց հետո իջա մեքենայից: Նա չկար... Իմ շատ սիրելի շնիկը չկար... Մութ էր արդեն: Հիվանդանոց գնացի: Կինս անմիջապես հասկացավ, որ ինչ-որ բան է պատահել... Չխոսեց, միայն կասեմ, որ գիշերները այդքան բարդ վիրահատությունից հետո չէր քնում, թաքուն լաց էր լինում: Այդ արցունքները ֆիզիկական ցավից չէին, այլ՝ հոգեկան: Ինձ հետ չէր խոսում... Հետո, անմիջապես պետք է թոքերը վիրահատեին... Ամեն ինչ բարեհաջող անցավ... Հա, ստուգվածներից եւ ոչ մեկի մոտ էխինակոկ չհայտնաբերվեց... Հետո իմացա, որ շատ ու շատ հիվանդներ կենդանի չեն պահում, բայց էխինակոկով են վարակված, այդ իսկ պատճառով էլ վիրահատվել են...

Երանի շուտ իմանայի, որ էխինակոկով կարող են վարակվել խոզի մսից, կանաչեղենից եւ այլ սննդամթերքի միջոցով: Ուրեմն իմ շունը մեղավո՞ր չէր... Այս անգամ հոգեկան սարսափելի հարված ստացա... Բայց ուշ էր, ես արել էի անդառնալին, կուզեք՝ ոճրագործություն կոչեք իմ արարքը... Չեմ փորձում արդարանալ, չեմ էլ ցանկանում... Մեղավոր եմ, մեղք եմ գործել: Անգամ մեկ տարի չանցավ այս ամենից, տառապանքներից, մեծ ֆինանսական ծախսերից հետո, երբ կինս ինձ ստիպեց շուն բերել: Բոլոր տեսակի կենդանիների մեջ միշտ էլ շանն է սիրել եւ միշտ ասում էր ու ասում է, որ շունը ամենահավատարիմ կենդանին է ողջ տիեզերքում: Ասաց, որ թող մեզ հանդիմանեն, մեղադրեն, թող մեր տուն չգան, բայց սխալն ուղղել է պետք...

Իսկ մինչ ես սխալս կուղղեի, նա պատուհանի մոտ էր նստում եւ սպասում էր շանը կամ էլ փողոցներում էր փնտրում, հարց ու փորձ անում եւ այլն... Այսպես չէր կարող շարունակվել... Ես նոր շուն բերեցի ու նվիրեցի կնոջս... Բայց մինչ այսօր նա ինձ չի ներում... Շունը մեզ հետ մեծանում է, տան անդամն է, ինչպես...»:

Նախ ասեմ, որ շատ-շատերին գիտեմ, ովքեր շանը տարել, կորցրել են: Խուսափում էին պատմել՝ ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը: Վերջապես այս տղամարդը համարձակություն ունեցավ պատմելու իր գործած մեղքի մասին: Պատմելու ժամանակ նրա աչքերը կարմրել էին, կարծես թե երեկ էր կատարվել այդ դեպքը: Այդ տղամարդը չէր կարողանում պատմելու ժամանակ լացել, միգուցե ամաչո՞ւմ էր կին լրագրողից: Իսկ ինչքա՜ն շատ են այսպիսի դեպքերը: Շանը փողոց են նետում, ծնողներին՝ ծերանոց: Հետո էլ տանջվում, փնտրում են: Այս դեպքը միայն մեկ մեղմացուցիչ հանգամանք ուներ՝ կնոջ առողջության մասին էր խոսքը: Բայց ափսոս, որ այդ անմեղ շանը կորցրեցին...

Ինձ համար շատ դժվար էր լսել այս պատմությունը, ես էլ շուն ունեմ, որին շատ եմ սիրում: Շունը երբեք չի հավատում, որ իր տերը, բարեկամը՝ մարդը, ցավ կպատճառի իրեն: Շները նվիրվում են անմնացորդ: Միգուցե փողոցներում հանդիպող, երբեմն մարդկանց կծող շները, հենց լքված շնե՞րն են: Մարդ արարած, եթե կենդանի ես պահում, դու պարտավոր ես եւ պարտական ես նրա առաջ, չէ՞ որ նա շատ անպաշտպան է, խղճելի:

Մարդի՛կ, բարի եղեք, շունն էլ ձեզ չի կծի: Հեռուստաընկերություններ կան, որ շներին եւ ագռավներին արդեն դասում են գայլերի, արջերի շարքը: Միգուցե քաղաքով մեկ թափված, ոտքի տակ տրորվող ա՞ղբն է մեղավոր, ո՞վ գիտի... Միգուցե՝ այո՞:

**ՄԱՐԻ ՇԻՇՄԱՆՅԱՆ**

AZG NEW 5.QXD 8/27/2009 10:39 PM Page 1



# Ռուսական գազ ուղիղ ճանապարհով Հյուսիսային Օսիայից՝ Հարավային

*Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախության ճանաչման ռուսական յուրօրինակ նշանավորումը*

**Օգոստոսի 26-ը հետաքրքրական ամսաթիվ է ոչ միայն քաղաքական, այլեւ տնտեսական կտրվածքով այնպիսի մի իրադարձության առնչությամբ, ինչպիսին նախորդ տարի Ռուսաստան-Վրաստան պատերազմն էր՝ իր ոչ միանշանակ հետեւանքներով: Առայժմ օգոստոսի 26-ը Ռուսաստանի կողմից Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախության ճանաչման օրն է, որից միայն մեկ տարի է անցել:**

**Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախության ճանաչումն այլ երկրների կողմից դեռեւս իր օգտին ոչինչ չի գրանցել, դրա փոխարեն զուտ տնտեսական համագործակցության առումով Ռուսաստան-Աբխազիա եւ Ռուսաստան-Հարավային Օսիա հարաբերությունները զարգանում են դեռեւս նախորդ տարի կնքված «համագործակցության» պայմանագրերին ու համաձայնագրերին համապատասխան:**

**Այս տարվա օգոստոսի 26-ին, ինչպես Վրաստանը, այնպես էլ Ռուսաստանը «ամփոփեցին» մեկ տարվա վաղեմության հասած իրավիճակի գնահատականները: Սակայն միայն պետական մակարդակով արված հայտարարություններով չսահմանափակվեց օգոստոսի 26-ի նշանավորումը: Նույն այդ օրը ռուսաստանյան գազը Ձուարիկաու (Հյուսիսային Օսիա) - Ցխինվալ (Հարավային Օսիա) գազատարով հասցվեց Հարավային Օսիա, որը ուղղակի գազամատակարարում կպահովի, քանի որ այս գազատարը չի անցնում Վրաստանի տարածքով:**

**Մինչեւ Ձուարիկաու-Ցխինվալ գազատարի կառուցումը Հարավային Օսիան գազ էր ստանում Ագարա-Ցխինվալ գծով, որը միացված էր Թբիլիսի-Քութաիսի մայրուղուն: Նոր գազատարի շահագործմամբ Հարավային Օսիան, ըստ պաշտոնական հայտարարությունների, կհրաժարվի Վրաստանի տարածքով անցնող նախկին գիծը շահագործելուց:**

**«ՌԻԱ Նովոստի» գործակալության տեղեկացմամբ, գազատարի թողարկումը հեղինակած «Գազպրոմ» ընկերությունը հայտարարել է, թե այդուհետեւ երաշխավորում է Հարավային Օսիա գազի անխափան մատակարարումը «առնվազն 100 տարի» այն դեպքում, երբ գազատարի շահագործումը կիրականացվի համատեղ ուժերով:**

**«Գազպրոմի» վարչության ղեկավար Ալեքսեյ Միլլերը տեղեկացրել է, որ հարավօսական կողմի հետ համագործակցության պայմանագիր է կնքվել 20 տարով, որով նախատեսվում է Հարավային Օսիայի գազաֆիկացման ծրագրի իրականացումը:**

**Նույն օրը՝ օգոստոսի 26-ին, Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինն ու Հարավային Օսիայի ղեկավար Էդուարդ Կոկոյտին քննարկումներից հետո Հարավային Օսիային սոցիալ-տնտեսական զարգացման հարցում օգնություն ցուցաբերելու մասին միջկառավարական համաձայնագիր ստորագրեցին: Ռուսաստանն այս տարի նախատեսել է 10 մլրդ դոլարի օգնություն ցուցաբերել Հարավային Օսիային՝ հավելյալ միջոցներ տրամադրելու հնարավորությամբ:**

**Հենց Պուտին-Կոկոյտի հանդիպումից հետո էլ «Գազպրոմը» իրականացրել է Ձուարիկաու-Ցխինվալ գազատարով գազամատակարարման մեկնարկը:**

**Հետաքրքրական է, որ 169 կմ երկարությամբ եւ 400 մմ տրամագծով Ձուարիկաու-Ցխինվալ գազատարը թերեւս Ռուսաստանի համար ունի մեծագույն նշանակություն, քանի որ «Գազպրոմի» ղեկավարությունը խոստովանել է, որ նույնօրինակ պայմաններում մինչ այդ երբեւէ գազատար չի կառուցվել, ավելին, գազատարի անցկացման որոշ հատվածներում լեռների բարձրությունը ռեկորդային է:**

**Խնդիրն այն է, որ գազատարի 70 կմ-ից ավելի հատվածն անցնում է կովկասյան բարձրլեռնային շրջանով, որի ամենաբարձր կետը գտնվում է 3148 մետր բարձրության վրա: 2006-ի դեկտեմբերին սկսված գազատարի շինարարության հյուսիսօսական մոտ 100 կմ-անոց հատվածն ավարտին է հասցրել «Գազպրոմը», մնացյալը, արդեն հարավօսական տարածքում՝ տեղական «Իստրա» կազմակերպությունը: Ձուարիկաու-Ցխինվալ գազատարի արժեքը 15 մլրդ ռուբլի է:**

**Վրաստանը, բնականաբար, դեմ է արտահայտվել Ձուարիկաու-Ցխինվալ գազատարի բացմանը: Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը տարածել է հայտարարություն, որի համաձայն «2009-ի օգոստոսի 26-ին, Ռուսաստանի կողմից օկուպացված տարածքներում ստեղծված մարիոնետային ռեժիմների՝ այսպես կոչված ճանաչման տարեդարձի օրը, Ցխինվալում բացվել է Ձուարիկաու-Ցխինվալ գազատարը, որը միացնում է Ռուսաստանի Դաշնությունն ու Վրաստանի օկուպացված Ցխինվալի շրջանը»:**

**Համաձայն Վրաստանի ԱԳՆ-ի, այդկերպ Ռուսաստանը հերթական անգամ խախտել է միջազգային իրավունքի, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ այլ նորմեր: Նախարարության հայտարարության մեջ ընդգծվում է, թե «Վրաստանի տարածքում Ռուսաստանի եւ ռուսական ընկերությունների գործունեությունն առանց պաշտոնական Թբիլիսիի թույլտվության ոտնձգություն է միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքների հանդեպ»:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԵՀՐԱՆ

# Խամենեի. «Ընդդիմությանը օտարերկրյա օգնության հատկացումն ապացուցված չէ»

Իրանի գերագույն հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեին խոստովանել է, որ ինքն ապացույցներ չունի, թե ընդդիմությունն օգնություն է ստացել օտար պետություններից: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով իրանական հեռուստատեսությանը:

«Ես վերջերս պատահած միջադեպերի հրահրիչներին չեմ մեղադրում օտարներին, օրինակ, ԱՄՆ-ին կամ Բրիտանիային ենթարկվելու մեջ», մանրամասնել է Խամենեին: Խոսքը հունիսի 12-ի նախագահական ընտրություններում Ահմադինեժադի վերընտրությանը հաջորդած զանգվածային ցույցերի եւ անկարգությունների մասին է, որոնց ընթացքում բախումներից զոհվեցին տասնյակ մարդիկ:



Բողոքի ձեռնարկումների կազմակերպիչները Իրանի իշխանություններին մեղադրում էին ընտրությունների արդյունքների կեղծման մեջ: Ընդդիմության կարծիքով, ընտրություններում հաղթել է նախկին վարչապետ Միր-Հոսեյն Մուսավին: Անկարգությունների ճնշման ընթացքում իշխանությունները քանիցս ենթադրություն էին արել, թե ընդդիմադիրներին աջակցում են օտար պետությունների ներկայացուցիչները:

Միաժամանակ ձերբակալվել էին Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցչությունների մի շարք ներկայացուցիչներ, մասնավորապես ֆրանսուհի դասախոս Կլոտիլդա Ռեյսը եւ Ֆրանսիայի դեսպանատան աշխատակցուհի Նազակ Աֆշարը, ինչպես նաեւ Բրիտանիայի դեսպանատան աշխատակից Հուսեյն Ռասսամը: Երեքին էլ բաց էին թողել գրավի դիմաց, սակայն անկարգությունների կազմակերպմանը մասնակցելու եւ լրտեսություն անելու մեղադրանքները այդպես էլ չէին հանվել:

# ԱՄՆ-ում ձերբակալվել է դեմոկրատների գլխավոր ֆինանսիստը



ԱՄՆ Դեմոկրատական կուսակցության օգտին հանգանակություններ կազմակերպող գլխավոր անձնավորությունը ձերբակալված է, հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը: Խոսքը նյույորքցի ֆինանսիստ եւ միլիոնատեր Հասան Նեմազիի մասին է, որը կապեր ունի Հիլարի Քլինթոնի եւ Բարաք Օբամայի հետ: Քննության տվյալների համաձայն, Նեմազին Citibank կորպորացիայից խաբեությամբ 74 մլն դոլար փոխառություն է ստացել:

Դատախազությունում կարծում են, որ Նեմազիի հանցավոր սխեման գործի է դրվել 2006-ի վերջերին: Փոխառություն ձեւակերպելով՝ ֆինանսիստը Citibank-ին տրամադրել է կեղծ տվյալներ:

Օգոստոսի 24-ին ՀԴԲ ներկայացուցիչները հարցաքննել են Նեմազիին, որն անհապաղ բանկին վերադարձրել է փոխառության ամբողջ գումարը: Հաջորդ օրը նրան կալանքի տակ են առել: Ներկայումս բանակցություն է սկսվել գրավի դիմաց նրան ազատելու նպատակով:

59-ամյա Նեմազին իրանական ծագումով ամերիկացի է եւ Nemazee Capital ներդրումային հոլդինգի ղեկավարն է, բայց ավելի շատ հայտնի է որպես Դեմոկրատական կուսակցության հովանավոր: 1990-ականներին նա միջոցներ է հանգանակել Բիլ Քլինթոնի եւ Ալբերտ Գորի ընտրարշավի համար: Դեմոկրատների օգտին նրա կատարած անձնական նվիրատվությունները հասնում են հարյուր հազարավոր դոլարների:

2008-ի նախագահական ընտրություններից առաջ ֆինանսիստը պաշտպանեց Հիլարի Քլինթոնի թեկնածությունը եւ նրա ազգային շտաբում ստացավ ֆինանսավորման հարցերի գծով նախագահի պաշտոնը: Դեմոկրատների նախնական ընտրությունների ավարտից հետո Նեմազին սկսեց պաշտպանել հաջողակ թեկնածու Բարաք Օբամային եւ նրա համար հանգանակեց ավելի քան կես միլիոն դոլար:

Նեմազիի հետ կապված սկանդալի մասին տեղեկանալով, մի շարք դեմոկրատ գործիչներ (այդ թվում՝ փոխնախագահ Ջո Բայդենը) մտադրություն են հայտնել վերադարձնելու ֆինանսիստից իրենց ստացած նվիրատվությունները կամ դրանք օգտագործելու բարեգործական նպատակներով:

# Կաստրոն դրվատեց Օբամայի ներքին քաղաքականությունը



**Կուբայի նախկին ղեկավար Ֆիդել Կաստրոն կառավարական «Գրանմա» թերթում վերլուծական հոդված է հրապարակել ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի քաղաքականության վերաբերյալ: CNN հեռուստաընկերությունը հաղորդում է, որ հոդվածում Կաստրոն դատապարտում է Աֆղանստանի պատերազմը, սակայն դրվատանքով է խոսում Օբամայի ներքին քաղաքականության մասին:**

**Զարմանք արտահայտելով վերջերս ԱՄՆ-ում Օբամայի վարկանիշի անկման կապակցությամբ՝ Կաստրոն նրա անհաջողությունները բացատրել է ամերիկացիների ռասայական նախապաշարմունքներով:**

**Ըստ Կաստրոյի, հենց ամերիկացիների «ավանդական ռասիզմն» է խանգարում Օբամայի նորամուծությունների իրականացմանը եւ մասնավորապես առողջապահության համակարգի բարեփոխմանը: Բուժապահովագրական համազգային համակարգ ստեղծելու Օբամայի նախաձեռնությունն արժանացել է Կաստրոյի հավանությանը:**

**Կուբայի նախկին ղեկավարը, սակայն, սխալ է համարում ամերիկյան զորքի տեղափոխությունն Իրաքից Աֆղանստան: Կաստրոն հիշեցնում է, որ անցյալում նույնիսկ Խորհրդային Միությունը չի կարողացել հաղթել «Թալիբան» շարժմանը:**

**2008-ին պետության ղեկավարի պաշտոնը եղբորը՝ Ռաուլին զիջած Ֆիդել Կաստրոն կուբայական մամուլում քանիցս անդրադարձել է դեմոկրատ Օբամայի քաղաքական գծին եւ զգալի ակնկալիքներ ունի ԱՄՆ նոր նախագահից, սակայն պահանջում է, որ Վաշինգտոնը վճռականորեն բարելավի հարաբերությունները Հավանայի հետ: Օգոստոսի սկզբներին Կուբայի նոր նախագահ Ռաուլ Կաստրոն երկկողմ հարաբերությունները նորովի ձեւավորելու պատրաստակամություն հայտնեց՝ միաժամանակ ընդգծելով, որ Կուբայի քաղաքական վարչակարգը չի փոխվելու:**

# Վարշավան էապես կրճատեց Սիբիր աքսորված լեհերի թիվը

**Վարշավայում գործող Ազգային հիշողության ինստիտուտը եռակի կրճատել է 1939-ից հետո Սիբիր աքսորված լեհերի թիվը: Մինչեւ վերջերս խորհրդային իշխանության զոհ էր համարվում 1 մլն մարդ, իսկ այժմ լեհերը խոսում են 320 հազար աքսորյալների մասին:**

**Ինստիտուտը վերանայել եւ կրճատել է նաեւ Երկրորդ աշխարհամարտում զոհված լեհերի թիվը: Այժմ լեհ պատմաբանները խոսում են 5,62-5,82 մլն զոհերի մասին, մինչդեռ կոմունիստական Լեհաստանում ընդունված էր 6,028 միլիոնը:**

**Նոր վիճակագրությունը հաշվի է առնում լեհական հրեաներին, որոնք փաստորեն կազմում են Եվրոպայում պատերազմի ժամանակ սպանված հրեաների կեսը: Ինստիտուտի տվյալներով, մոտ 150 հազար լեհերի մահվան մեջ մեղավոր է ԽՍՀՄ-ը, իսկ մյուսները ֆաշիզմի զոհերն են:**

**1944 թ. Վարշավայի ապստամբության ժամանակ զոհվածների թիվը 200 հազարից իջեցվել է 150 հազարի, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**1939-ի օգոստոսին ԽՍՀՄ-ը եւ Գերմանիան ստորագրեցին չհարձակվելու պայմանագիր (Մոլոտով-Ռիբենտրոպի պակտ), որին կից գաղտնի արձանագրությամբ երկու կողմերը փաստորեն կիսում էին Արեւելյան Եվրոպան: Սեպտեմբերի 1-ին Գերմանիան ներխուժեց Լեհաստան: Դրանից քիչ անց Կարմիր բանակը գրավեց Լեհաստանի արեւելյան մասը:**

# Հուշատախտակ Կոստան եւ Արմեն Զարյանների հիշատակին

Երեւանի Կաթողիկե եկեղեցուց քիչ վերեւ, Աբովյան թիվ 17 շենքի դիմաց հավաքված մարդկանց խմբի գոյությունը քաղաքի ներկա իրականության, ընթացքի համար շատ էր անսովոր. այստեղ կարելի էր հանդիպել այն սակավ հայերին, որոնց հրաշալի ներկայությունը հիշեցնում է ոչ վաղ անցյալի մտավորական միջավայրի մասին՝ կիրթ, գրագետ, զուսպ:

Կոստան Զարյանը խորհրդային հայաստանյան իրականության մեջ եզակի երեւույթ էր՝ անսովոր եւ օտար տիրող մթնոլորտին, համաշխարհային մշակույթին ոչ միայն քաջատեղյակ, այլեւ դրա անմիջական կրողը, կրթված, ձեւավորված եվրոպական մշակութային միջավայրերում, բարձր ինտելեկտուալ մարդ. ներքին մեծ կուլտուրայի տեր մտավորական, որի գրականությունը, անհատականությունն ու մտածողությունը խորհրդահայ իրականությանը անհամատեղելի էին, եւ պատահական չէր նրա ստեղծագործության եւ անձի հանդեպ անբարյացակամությունը եւ, թերեւս, նաեւ դրանից՝ գրողի մենակությունը: Նա չհասկացված էր, այս երեւույթը հիմա էլ շարունակվում է. ժամանակները շատ չեն փոխվել: Սակայն ի բարեբախտություն հայ մշակույթի, հետխորհրդային անկախության շրջանը հնարավորություն տվեց Կոստան Զարյանի գրականության գնահատման, եւ վերջին տարիներին միայն «Սարգիս Խաչենց» հրատարակչությունը տպագրել է նրա մի քանի գրքեր: Հենց օրերս լույս տեսավ նրա բանաստեղծությունների նոր ժողովածուն՝ «Բառերի ոսկին», որի, ինչպես նախորդ 3 հատորների կազմողն ու խմբագիրը Երվանդ Տեր-Խաչատրյանն է՝ Յուրի Խաչատրյանը:

Կյանքի վերջին տարիներին Կոստան Զարյանը եւ որդին՝ ճարտարապետ Արմեն Զարյանը, ապրել են Աբովյան թիվ 17 շենքում: Երեկ շենքի պատին տեղադրվեց այս մասին վկայող հուշատախտակը՝ գրքի նմանվող քարե բացվածքի մի «էջին» Կոստան Զարյանի, մյուսին՝ Արմեն Զարյանի ապրած տարեթվերի



ՖՈՏՈԼՈՒՐ

արձանագրությամբ: Հեղինակներն են Կոստան Զարյանի թոռը՝ Արա Զարյանը եւ Աշոտ Գրիգորյանը:

Հուշաքարի պատրաստման եւ տեղադրման աշխատանքները կատարվել են բարեգործական հիմունքներով, ճարտարապետության թանգարանի, մի քանի ճարտարապետների. մասնավորապես Մուրադ Գրիգորյանի օգնությամբ, աջակցությամբ Զարյան ընտանիքի: Միջոցառման նախաձեռնողը մշակույթի նախարարությունն է, քաղաքապետարանի համաձայնությամբ:

«1910-ականներին Կոստան Զարյանը դառնությամբ գրեց, թե շատ սարսափելի բան է փոքր ազգի գրող լինելը եւ այն էլ հայ ազգի: Այդ դառնության մեջ տեղ ունի Կ. Զարյանի ոչ համարժեք գնահատության խնդիրը, նրա վիթխարի ստեղծագործական ժառանգությունը մինչեւ օրս ոչ լիարժեք է գնահատվել: Զարմանալի կենսագրություն ունեցած, անդաստական կյանքով ապրած մտավորական, որ կարողացավ համաշխարհային մշակույթների հեւքը, շունչը բերել մեր գրականություն: Վիթխարի ինտելեկտի, հզոր տաղանդի տեր մարդ, որ գրական գրեթե բոլոր ժանրերով ստեղծագործել է: Բարեբախտաբար՝ այսօր մենք վերադառնում ենք Կոստան Զարյանին եւ նրա գրականությանը» (Լեւոն Անանյան):

Գրողի որդին՝ Արմեն Զարյանը, տաղանդավոր ճարտարապետ էր, մշակութաբան: Եվրոպայում մասնագիտական բարձր կրթություն ստանալուց հետո վերադարձել է Հայաստան: «Երեւաննախագիծ» ինստիտուտում աշխատելու առաջին օրերից մասնակցել երկրի քաղաքաշինության խնդիրներին. «Իր թողած ժառանգությունը՝ Գլխավոր պողոտան էր, որի իրականացման ականատեսը, ափսո՜ս, չեղավ»:

Հուշատախտակի բացմանը ներկա էր գրողի թոռը՝ Երեւանում ուսանած, այժմ Իտալիայում բնակվող ճարտարապետ Արա Զարյանը: Նա իր շնորհակալական խոսքն ուղղեց իշխանություններին, գրողների, ճարտարապետների միություններին, Կոստան Զարյանի գրական ժառանգության ուսումնասիրողներին, բոլոր ներկաներին. «Հենց նոր ինձ նվիրեցին Կոստան Զարյանի «Միացյալ Նահանգներ» գրքի ռուսերեն թարգմանությունը, տեղյակ եմ նաեւ բանաստեղծությունների նոր ժողովածուի մասին... », խոսքը չավարտած կողքից Արծվի Բախչինյանը նրան մեկնեց «Բառերի ոսկին» նորընծա հատորը: «Շնորհակալ եմ այս գրքերի, մթնոլորտի համար», ասաց նա:

Այսօր ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի սրահում կբացվի Արմեն Զարյանի աշխատանքների ցուցադրությունը եւ տեղի կունենա նրա գրքի շնորհանդեսը:

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

# Դիզայներական կրթության զարգացումը Հայաստանում

**Գեղեցիկ արվեստների ակադեմիան դիզայն մասնագիտացումով (ինտերիեր- էքստերիերի, հագուստի, գրաֆիկայի, արդուզարդի դիզայն) հիմնադրվել է 1996 թվականին, երբ փլուզում-վերափոխումները երկրում տեղի էին ունենում հանրային կյանքի բոլոր ոլորտներում, նաեւ, իհարկե՝ կրթության: Դրանից առաջ արդեն մասնավոր բուհերի փորձը ինչ-որ չափով կար: Գեղեցիկ արվեստների ակադեմիան առաջին պետական հավասարմագրում ստացած մշակույթի մասնավոր բուհն է, որի հիմնադիր ռեկտոր նկարիչ-դիզայներ Էդուարդ Սեդրակյանը մանկավարժական երկարամյա փորձով (1972-ից աշխատել է մանկավարժական ինստիտուտի նկարչության ֆակուլտետում, գծանկարի ամբիոնին կից ստեղծել է դիզայնի բաժանմունք) կարողացել է ապահովել ստեղծագործական աշխատանքի ամենակարեւոր գործոններից մեկը՝ մթնոլորտը, ինչպես ինքն է ասում՝ արվեստանոցայինը: *«Փորձում ենք բուհը նմանեցնել մի լավ, բարի, տրադիցիոն ընտանիքի, պահպանել արվեստի մթնոլորտը: Փորձը ցույց է տալիս, որ երբ ստեղծվում է համապատասխան միջավայր, մարդիկ սկսում են փոխվել: Սա հիմնականում կախված է ղեկավարի տրամադրվածությունից, նրա սկզբունքներից»*, մեր զրույցի ժամանակ ասաց նա, հանգամանորեն պատմեց անցած տարիների ձեռքբերումների մասին:**

**Այսօր բուհն ունի շուրջ 180 ուսանող՝ 4 մասնագիտացմամբ: Ակադեմիային կից գործում է քոլեջ՝ նույն մասնագիտություններով, տարին բոլոր՝ հոկտեմբերից մինչեւ սեպտեմբեր գործում են նախապատրաստական դասընթացները: Առաջին կուրսում ընդհանուր դիզայնի տեսական հիմունքների դասընթացներն ու ներբուհական ցուցահանդեսները ուսանողին օգնում են՝ կողմնորոշվելու նեղ մասնագիտություն ընտրելու մեջ՝ անշուշտ, ունենալով դասախոս-խորհրդատուների աջակցությունը:**

**Մեր քաղաքային միջավայրն այսօր, ցավոք, թե՛ շինարարական-ճարտարապետական, թե՛ գեղագիտական հարդարանքների տեսանկյունից շատ հեռացած է ընդունված չափանիշներից, նույնիսկ պարզ ճաշակը չի բավարարում: Երեւանը վաղուց կորցրել է քաղաքային իր նախկին համաչափ նկարագիրը, ավելի շուկայական տեսք է առել, քարե, մետաղե խայտաբղետ կառույցների աններդաշնակ կույտի վերածվել: Որոշ հատվածներ, իհարկե, գեղեցիկ են, համաչափ, երբ պահպանված է միջավայրային տարածությունը: Գովազդային ցուցանակներն ու խանութների ցուցափեղկերի (հատկապես փոքր), կրպակների ձեւավորումը քաղաքը խզբզած գույներով կտավի է վերածում: Հետաքրքրական է՝ մեր ակադեմիայի շրջանավարտները որքանո՞վ են կարողանում իրենց ստացած գիտելիքներն ի սպաս դնել դիզայնի այս ասպարեզում: Քանի որ հայտնի է՝ գործում, ավելի շուտ տիրում են կառույցների սեփականատերերի կամայական, քմահաճ մոտեցումներն ու քաղաքային իշխանությունների թույլ վերահսկողությունը:**

**Ինչեւէ, վերադառնանք ակադեմիային եւ նրա ընթացիկ տարիների հաջողություններին, որոնք հանրագումարի են բերվել բազմաթիվ մրցույթ-փառատոների արդյունքում: Այս առումով բուհը հարուստ փորձ ունի՝ շուրջ 170 մրցույթ-փառատոն, որոնցից 70-ը՝ հանրապետական եւ միջազգային մակարդակի: Անդրադառնանք դրանցից կարեւորներին, որոնք պատվաբեր են ոչ միայն առանձին ուսանող-դասախոսի եւ բուհի, այլեւ մեր երկրի համար:**

**Հիմնադրման առաջին տարին Երեւանի Կենտրոնական նորաձեւության տանը ակադեմիան կազմակերպեց հագուստի դիզայնի 1-ին մեծ ցուցահանդեսը. այն ապագայի խոստումնալից ծրագրի սկիզբն էր:**



*Ինգա Դուդուկչյան. «Գիծ եւ ծավալ»*

**2001-ի «Ռուսսկի սիլուետ» միջազգային մրցույթի տարածաշրջանային եզրափակիչ փուլին (Ծաղկաձոր) 29 մասնակիցներից 8-ը ակադեմիայի սաներն էին. նրանցից Ինգա Դուդուկչյանը շահեց Գրան պրին, երեքը գրավեցին 1-ին, 3-րդ եւ 4-րդ տեղերը, երկուսը ստացան խրախուսական մրցանակ: Դիզայներների միջազգային միության՝ 2004-ին Օրյոլում կազմակերպված փառատոնի («Ինտեր-դիզայն») շուրջ 380 մասնակիցներ ներկայացնում էին պետություններ արտերկրից եւ ԱՊՀ-ից: Հանձնաժողովը ղեկավարում էր Ֆլորենցիայի դիզայնի եւ մոդայի ակադեմիայի նախագահ Ֆինչենցո Չուպպան: Հայաստանը ներկայացնող ակադեմիայի բոլոր 4 ուսանողները շահեցին մրցանակներ. մեկը լավագույն տասնյակի մեջ մտավ, մեկը՝ հագուստի դիզայնում արժանացավ 3-րդ կարգի, մյուսը՝ գրաֆիկական դիզայնում 1-ին կարգի դիպլոմների: Գրան պրին (հագուստի դիզայն) շահեց Մարինե Մանուկյանը: «Հայկական սիլուետ» երեւանյան 2-րդ մրցույթին, որի նախագահը հռչակավոր Վյաչեսլավ Զայցեւն էր, Մարինե Մանուկյանի՝ կոնստրուկցիայի սկզբունքով կառուցված «Օրիգամի» նախագիծը շահեց Գրան պրին: Դրանից բացի, նա Վ. Զայցեւից ստացավ իր լաբորատորիայում անվճար ուսանելու աննախադեպ հրավեր (այստեղ սովորում են բուհն ավարտելուց հետո միայն): Երկու տարի անց Օրյոլում կայացած միջազգային մրցույթին նա դարձյալ արժանացավ Գրան պրիին, իսկ ակադեմիան՝ «Լավագույն դպրոց» մրցանակին:**

**Մալթայի 2005-ի Բիենալեին, որ տեղի էր ունենում միջնադարյան մի ամրոցի հետաքրքրական, էկզոտիկ միջավայրում, ընդգրկում էր շուրջ 105 երկրների (Գերմանիա, Անգլիա, Իսպանիա, Իտալիա, Բոսնիա, Ռուսաստան եւ այլն) մասնագետներ՝ քանդակագործներ, դիզայներներ, ճարտարապետներ: Մեր մասնակիցներից Մարինե Մանուկյանը ներկայացնում էր «Երկրաչափական պրոգրեսիա-2», Արամ Նիկոլյանը «Հին ձեռագրեր» հավաքածուները՝ երկուսն էլ ինքնատիպ աշխատանքներ: Վերջինի՝ կաշվի եւ շիֆոնի համադրությամբ ուշագրավ մոդելները՝ բաղկացած են կիլիկյան մանրանկարչության վերարտադրության ձեւավորումով երկարաճիտ կոշիկներից եւ կաշվե բաճկոններից, վրան՝ հին ձեռագրային տեքստերից հատվածներ. աքսեսուարային հավելվածները (գոտիներ, ականջօղեր)՝ Վարդան Բադոյանի: Գրաֆիկական դիզայնի մրցույթին մասնակցում էր Սերգեյ Մկրտչյանը: Բոլոր երեք մասնակիցները եւ ակադեմիան ստացան հատուկ դիպլոմներ:**

**Այս տարի ակադեմիայի մրցանակային հունձքն առավել առատ էր: Մոսկվայի ստրոգոնովյան փառատոնին, որ կազմակերպվում է մասնագիտական բուհերի դիպլոմային եւ կուրսային աշխատանքների միջեւ, քանից ավելի հեղինակավոր բուհերի մրցակցության մեջ Գրան պրին ստացավ հայ ուսանողը, իսկ ակադեմիան՝ Ֆյոդոր Պարմանի անվ. արծաթե մեդալը: Մոսկովյան միջազգային «Ազգային տարազ» («էթնէրատո») հոբելյանական 10-րդ մրցույթի «Էթնէրատո» բրոնզե արձանիկը ստացան մեր ուսանողները եւ ակադեմիան, նաեւ Մոնղոլիայի եւ Ռոստերդամի փառատոների մասնակցության հրավեր ստացան: Ուլան-Բատորի հուլիսյան փառատոնը իր բնույթով ուսանողական չէր. Չինաստանի, Մոնղոլիայի, Կորեայի դիզայներական կենտրոնների փորձառու մասնագետների հետ մրցակցող մեր ակադեմիայի սաները միակն էին որպես ուսանողներ: Նրանց ներկայացրած «Պլյուս ֆոլկ» եւ «Սլավյանսկի սուվենիր»՝ հայկական եւ ռուսական ազգային տարազների թեմաներով նախագծերը արժանացան դիպլոմների, ակադեմիան եւ ռեկտորը՝ ներկայանալի սերտիֆիկատի:**

**Ռոստերդամի աշնանային փառատոնին Հայաստանը կներկայացնեն ակադեմիայի շրջանավարտներ Ինգա Դուդուկչյանը՝ «Գիծ եւ ծավալ» եւ Նինա Չանգլյանը «Ակունքներ» հավաքածուներով:**

**Այս հաջողությունները արձանագրելուց հետո, բնականաբար, հարց է ծագում, թե որտե՞ղ են դրսեւորում իրենց ուժերը բուհի շրջանավարտները, պահանջվա՞ծ են արդյոք նրանք աշխատանքով: Էդուարդ Սեդրակյանը վկայում է, որ շրջանավարտների մի մասը դիզայներական ֆիրմաներում է աշխատում: Մի շարք մրցույթների դափնեկիր Ռիմա Կազումյանը 3-րդ կուրսում դիզայներների միջազգային միության հրավերով մասնակցեց Ֆլորենցիայի դիզայնի եւ մոդայի ակադեմիայի ամառային դասընթացներին, իսկ բուհն ավարտելուց հետո մեկ տարի ուսանեց Միլանում: Այժմ նա հռչակավոր «Emporio Armani»-ի առաջատար մասնագետներից է: Բոգդանովկայի նորաբաց ջինսի արտադրության ֆիրմայի գլխավոր նկարիչ-կոնստրուկտորը Մարինե Մանուկյանն է, Վահան Այդինյանը աշխատում է «Փրինթինֆո» հրատարակչությունում:**

**Էդուարդ Սեդրակյանն այն կարծիքին է, որ մշակութային բուհերի ուսուցումը իր բնույթով ոչ միայն տարբեր է մյուսներից, նաեւ բարդ է. իհարկե, նկատի են առնված ուսուցման ստեղծագործական, անհատական մոտեցումները. ուսանող-դասախոս հարաբերություններն այս բուհում գործող ստերեոտիպերից դուրս են: Դասավանդման ընթացքը գիտելիքի փոխանցման ուսումնական պահանջներից զատ, ներառում է նաեւ մանկավարժ-հոգեբանի աշխատանք. *«Ուսանողի աշխատանքը, կոմպոզիցիան, մտահղացումը ավելի լավ պատկերացնելու համար դասախոսը զգայուն մոտեցում պիտի ցուցաբերի՝ հասկանալու նրանց հոգեբանությունը, հոգեվիճակը, տրամադրությունը, կյանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը»*: Բուհը վճարովի կրթություն է տալիս, սակայն «եթե ուսանողի մակարդակը չի բավարարում, նա մնում է նույն կուրսում, կամ հեռացվում է. դիպլոմ չի ստանում»:**

**Վերջին տարիներին ակադեմիան փորձեր է արել միջբուհական կապեր հաստատելու ուղղությամբ նաեւ: Ամիսներ առաջ Փարիզում «Մոդարտ» դիզայներական հաստատության հետ կնքվել է փոխհամաձայնագիր՝ 8-ական ուսանողների երկկողմանի փոխանակումով. ծրագիրն ամենայն հավանականությամբ կիրագործվի ձմեռային արձակուրդներին:**

**Այս ուսումնական տարի ավելի քան 40 ուսանող համալրել է ավանդույթներ ձեւավորած եւ փորձ կուտակած բուհական այս միջավայրը: Ակադեմիան Ռաֆֆու պողոտայից տեղափոխվել եւ այժմ գործում է Մերգելյան ինստիտուտի կառույցներից մեկում:**

**Կարծում եմ, առիթներ դեռ կլինեն՝ մասնակցելու ակադեմիայի կազմակերպած ցուցահանդես-փառատոներին: Առայժմ Էդուարդ Սեդրակյանի առաջարկած ալբոմներն եմ թերթում, որոնք խտացնում են բուհի անցած տարիների կենսագրության ցայտուն էջերը՝ մրցանակային հարուստ պատմություն (դիպլոմներ, պատվոգրեր, զանազան ներկայանալի մրցանակներ), հագուստի ճոխ հավաքածուների ցուցադրություններ,**



*Նինա Չանգլյան. «Ակունքներ»*

**որոնք ներկայացնում են ամենատարբեր մոդելներ՝ ձեւի, գույնի, ծավալի, անսովոր-ագրեսիվից մինչեւ մեղմ-նրբաճաշակը: Դրանք աչքի են ընկնում երեւակայության ազատությամբ, գեղագիտական հետաքրքրական լուծումներով: Առանձին ուշադրություն է դարձված տարբեր ժողովուրդների (ճապոնական, իտալական, ռուսական, հարավ-ամերիկյան, հայկական) ազգային տարազներին եւ դրանց ժամանակակից ոճավորմանը. իրոք, բազմազան, նորաձեւ, արվեստային:**

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

AZG NEW 7.QXD 8/27/2009 10:41 PM Page 1



# Հովհաննես Դավթյանի նվաճումը

Ռոտերդամում ընթացող ձյուդոյի աշխարհի մեծահասակների առաջնությունում իրոք պատմական նվաճման հասավ Հովհաննես Դավթյանը: Աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ հայ ձյուդոյիստը դարձավ մրցանակակիր: Ինչպես տեղեկացրել էինք նախորդ համարում, Դավթյանը շահելով առաջին 3 գոտեմարտերը, մտել էր քառորդ եզրափակիչ: Այդ փուլում նրան լուրջ փորձություն էր սպասվում հանձին աշխարհի չեմպիոն, ճապոնացի Հիրոակի Հիրաոկայի: Ցավոք, հայ ձյուդոյիստին չհաջողվեց կոտրել ճապոնացու դիմադրությունը: Վերջինս կիսաեզրափակիչում հաղթելով իտալացի Էլիո Վերդեին, մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում Հիրաոկան պարտություն կրեց Ուկրաինան ներկայացնող Գեորգի Զանտարայից եւ դարձավ արծաթե մեդալակիր:

Քանի որ Դավթյանի մրցակիցը հասել էր մինչեւ եզրափակիչ, ուստի մրցակարգի համաձայն նա իրավունք ստացավ մասնակցելու բրոնզե մեդալի համար մղվող մրցավեճին: Առաջին գոտեմարտում հայ ձյուդոյիստը պարտության մատնեց չեխ Պավել Պետրիկովին, ապա առավելության հասավ Իռլանդիան ներկայացնող Վահիդ Սառլակի նկատմամբ: Բրոնզե մեդալի համար վճռորոշ մենամարտում Հովհաննեսի մրցակիցը կիսաեզրափակիչում Հիրաոկային պարտված իտալացի Էլիո Վերդեն էր: Դավթյանն այս գոտեմարտն էլ վստահ անցկացրեց եւ հաղթանակ տոնելով, արժանացավ բրոնզե մեդալի:



60 կգ քաշայինների մրցավեճին մասնակցում էր եւս մեկ հայ ձյուդոյիստ՝ ռուսաստանցի Արսեն Գալստյանը: Նա առաջին գոտեմարտում հաղթեց շվեդ Օլե Սունդստրյոմին, սակայն հաջորդում պարտվեց Վահիդ Սառլակին եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Աշխարհի առաջնությունում Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը՝ 73 կգ քաշային Ռոբերտ Վարդանյանը, եւս անհաջողության մատնվեց: Նա առաջին գոտեմարտում զիջեց Ասիայի փոխչեմպիոն, ղազախստանցի Ռինատ Իբրահիմովին: Հիշեցնենք, որ նախորդ օրը նույն բախտին էր արժանացել նաեւ 66 կգ քաշային կարգում հանդես եկած 2005-ի Եվրոպայի չեմպիոն Արմեն Նազարյանը:

Այսպիսով, ձյուդոյի աշխարհի առաջնությունը հայ մարզիկների համար ավարտվեց: Հայաստանի 3 ներկայացուցիչները մեկ մեդալ նվաճեցին: Առայժմ առավել հաջող են հանդես գալիս ձյուդոյի հայրենիքի՝ Ճապոնիայի ներկայացուցիչները, որոնք նվաճել են մեկական ոսկե եւ արծաթե մեդալ: 2-ական մեդալ են նվաճել նաեւ Իսպանիայի (արծաթ) եւ Կորեայի (բրոնզ) ձյուդոյիստները: Մեդալների հաշվարկով Հայաստանն առայժմ 6-9-րդ տեղերն է բաժանում մեկական բրոնզե մեդալ նվաճած ֆրանսիացիների, հունգարացիների եւ իտալացիների հետ: Սակայն ցուցակում Հայաստանը կնահանջի, քանի որ հայ ձյուդոյիստներն արդեն ավարտել են ելույթները ի տարբերություն շատ երկրների, որոնք ներկայացված են քաշային ավելի մեծ թվով կարգերում:

ՇԱԽՄԱՏ

# Վարուժան Հակոբյանը հանդես կգա Մոնրեալի մրցաշարում

ԱՄՆ-ում բնակվող Վարուժան Հակոբյանը կմասնակցի Մոնրեալում մեկնարկող շախմատի ավանդական 10-րդ մրցաշարին: 12 մասնակիցները շրջանաձեւ մրցակարգով կվիճարկեն գլխավոր մրցանակը: Մեկնարկային տուրում Հակոբյանը սեւերով կխաղա Կանադան ներկայացնող Թոմաս Ռուսել-Ռուզմոնի հետ: Մեկնարկային տուրի մյուս զույգերը կազմել են Էթիեն Բաքրոն եւ Սեբաստիան Մազը, Սերգեյ Տիվյակովն ու Անտոն Կովալյովը, Վինայ Բհատն ու Ալեքսանդր Օնիշչուկը, Յուրի Շուլմանն ու Արկադի Նայդիչը, Մարկ Բլյուվշտեյնն ու Ալեքսանդր Մոիսեենկոն:

Ավանդական այս մրցաշարն անցկացվում է 2000-ից: Անդրանիկ մրցաշարի հաղթող է ճանաչվել Էդուարդ Ռոզենտալիսը, որը Սերգեյ Սմագինին գերազանցեց լրացուցիչ գործակիցներով: Երկուսն էլ 11 հնարավորից վաստակել էին 8,5-ական միավոր: Հաջորդ տարիներին մրցաշարի հաղթողներ ճանաչվեցին Ալեքսեյ Լեսիգեն (8 միավոր), Ժոել Դեգրավյեն (8,5), Էդուարդ Ռոզենտալիսը (8,5), Զախար Եֆիմենկոն (7,5), Վիկտոր Միխայլեւսկին (8), Պավել Էլյանովը (6,5՝ 9 հնարավորից), Վասիլի Իվանչուկը (7՝ 9 հնարավորից) եւ Յուրի Շուլմանը (6,5՝ 9 հնարավորից): Ինչպես տեսնում եք, վերջին 3 տարիներին մասնակիցների թիվը 2-ով կրճատվել էր: Այս տարի մրցաշարում կրկին հանդես կգան 12 շախմատիստներ:

Վարուժան Հակոբյանը 2-րդ անգամ է մասնակցելու այս մրցաշարում: Նա իր նորամուտը նշել էր անցյալ տարի՝ 10 մասնակիցների մեջ 5,5 միավորով գրավելով 3-րդ տեղը: Հաղթող էր ճանաչվել Յուրի Շուլմանը (6,5 միավոր), իսկ 2-րդ տեղը գրավել էր Հիկարու Նակամուրան, որը Վարուժանի հետ հավասար միավորներ էր վաստակել՝ նրան գերազանցելով միայն լրացուցիչ գործակիցների շնորհիվ:

# Բիլյալետդինովը տեղափոխվեց «Էվերտոն»



Ֆուտբոլի Ռուսաստանի հավաքականի եւ Մոսկվայի «Լոկոմոտիվի» կիսապաշտպան Դինիյար Բիլյալետդինովը հնգամյա պայմանագիր է կնքել անգլիական «Էվերտոնի» հետ: Բրիտանական զանգվածային լրատվամիջոցների տեղեկացմամբ, նրա տրանսֆերը կազմել է 9 մլն եվրո: Ըստ «Լոկոմոտիվի» նախագահ Նիկոլայ Նաումովի, անգլիական ակումբը ֆուտբոլիստով հետաքրքրվում էր վերջին 1,5 տարում: Սակայն 2008-ին «Լոկոմոտիվը» մրցաշարային բարդ իրավիճակում էր, ուստի Բիլյալետդինովը չցանկացավ հեռանալ ակումբից:

«Լոկոմոտիվի» ֆուտբոլային դպրոցի սանը հարազատ կոլեկտիվում նորամուտը նշել է 2004-ին՝ դառնալով ՌԴ չեմպիոն: Հաջորդ տարի նա թիմի հետ նվաճեց երկրի Սուպերգավաթը, իսկ 2006/07-ի մրցաշրջանում դարձավ ՌԴ գավաթակիր: 2007-ի հուլիսից Բիլյալետդինովը «Լոկոմոտիվի» ավագն էր: ՌԴ հավաքականի կազմում նա 28 խաղում 2 գոլ է խփել:

# Հայաստանից՝ երկու շախմատիստ

**Հունաստանի Կալամարիա քաղաքում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի 101 մասնակիցների թվում են Հայաստանը ներկայացնող Աղասի Ինանցն ու Դավիթ Զաքարյանը: Վերջինս ներկայումս բնակվում է Հունաստանում: Մրցաշարում արդեն կայացել է 6 տուր: Մեր շախմատիստները վաստակել են 4 միավոր: Ինանցը հաղթել է Վլադիմիրոս Սիամեթիսին, Գրիգոր Գրիգորովին եւ Զուլիա Մակային, հաշտություն է կնքել Դեյան Անտիչի եւ Ալին Բերեսկուի հետ: Միակ պարտությունն Ինանցը կրեց 6-րդ տուրում՝ զիջելով գերմանացի Ստեֆան Բրոմբերգերին:**

**Դավիթ Զաքարյանը շահել է Նիկոլաս Սավոգլիսի, Դիմիտրոս Մավրեասի, Կոնստանտինոս Չիկերդանոսի եւ Կոնստանտինոս Կոնստանտինիդիսի հետ անցկացրած պարտիաները, պարտվել է Դեյան Անտիչից ու Մարկոս Լիանեզայից: 5,5 միավորով մրցաշարի միանձնյա առաջատարը հնդիկ շախմատիստ Արուն Պրասադն է: 5-ական միավոր են վաստակել գերմանացի Ստեֆան Բրոմբերգերը եւ ռումինացի Ալին Բերեսկուն:**

# Կիպրոսը կրկին ներկայացված կլինի խմբային մրցաշարում

Ռումինական «Տիմիշոարան», որում խաղում են Քարամյան եղբայրները, չկարողացավ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի ուղեգիր նվաճել: Դրա համար անհրաժեշտ էր մրցակցի դաշտում «Շտուտգարտին» հաղթել 3 գնդակի տարբերությամբ, ինչը ռումինական ակումբի ուժերից վեր էր: Այս թիմերի մրցակցության ելքը վճռվել էր դեռեւս առաջին խաղում, երբ հյուրընկալվելիս «Շտուտգարտը» 2 անպատասխան գնդակ էր ուղարկել «Տիմիշոարայի» դարպասը: Առաջին խաղում 2-րդ զգուշացումն էր ստացել Արտավազդ Քարամյանը, ուստի նա չմասնակցեց պատասխան հանդիպմանը: Իսկ Արմանը մասնակցելով ողջ հանդիպմանը, 20-րդ րոպեին դեղին քարտի արժանացավ: Արմանն ու իր խաղընկերներն այդպես էլ չգտան մրցակցի դարպասի բանալին: «Շտուտգարտի» ֆուտբոլիստներին էլ չհաջողվեց գոլ խփել: Սակայն ի տարբերություն «Տիմիշոարայի», «Շտուտգարտին» 0-0 հաշիվը լիովին բավարարում էր:

Չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի գլխավոր անակնկալը մատուցեց Կիպրոսի ԱՊՈԷԼ-ը: Առաջին խաղում կիպրոսցիները մրցակցի դաշտում 0-1 հաշվով զիջել էին դանիական «Կոպենհագենին»: Սեփական հարկի տակ նրանց հաջողվեց համոզիչ ռեւանշի հասնել 3-1 հաշվով: Պատասխան հանդիպումը շատ հաջող սկսվեց դաշտի տերերի համար, որոնք արդեն 2-րդ րոպեին Կոսովսկու հարվածից հետո վերականգնեցին երկու խաղերի ընդհանուր հաշիվը: Իսկ 18-րդ րոպեին Միխայիլը 11 մ-անոց հարվածով 2-րդ գոլը խփեց: Թեեւ 4 րոպե անց հյուրերից Նդոյեն կրճատեց հաշիվը, սակայն մինչեւ ընդմիջում Միխայիլը եւս մեկ անգամ գրավեց մրցակցի դարպասն ու ապահովեց ընդհանուր հաղթանակը:




Այսպիսով, 2-րդ տարին անընդմեջ Կիպրոսը ներկայացված կլինի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Հիշեցնենք, որ անցյալ տարի այդ մրցաշարում հանդես եկավ «Անորտոսիսը», որն իր հաղթարշավը սկսեց «Փյունիկի» հետ հանդիպումից: Թիմը մարզում էր վրացի մասնագետ Թիմուր Կեցբայան: Նա հեռացել է թիմից՝ ստանձնելով հունական «Օլիմպիակոսի» ղեկը: Կեցբայային կրկին հաջողվեց իր սաների հետ խմբային մրցաշարի ուղեգիր նվաճել: Մոլդովական «Շերիֆի» հետ մրցավեճում դեռեւս առաջին խաղում հյուրընկալվելիս հաղթելով 2-0 հաշվով, «Օլիմպիակոսն» ուղեգրի նվաճման լուրջ հայտ էր ներկայացրել: Սեփական հարկի տակ էլ հաջողությունն ուղեկցեց հույներին: Միտրօղլուի խփած միակ գոլը հաղթանակ բերեց «Օլիմպիակոսին»:

Խմբային մրցաշարի ուղեգիր նվաճեց նաեւ իտալական «Ֆիորենտինան»: Պորտուգալական «Սպորտինգի» հետ մրցավեճն ամենահամառն էր: Առաջին խաղում, Լիսաբոնում գրանցվել էր ոչ-ոքի՝ 2-2: Պատասխան խաղում էլ կողմերին չհաջողվեց առավելության հասնել: Այս անգամ թիմերը մեկական գնդակ փոխանակեցին: Ի հաշիվ մրցակցի դաշտում խփած մեկ ավել գոլի, պայքարը կշարունակի «Ֆիորենտինան»:

Առանց որեւէ դժվարության չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում իր տեղն ապահովեց անգլիական «Արսենալը», որն առաջին խաղում հյուրընկալվելիս «Սելթիկին» հաղթել էր 2-0 հաշվով: Պատասխան խաղում էլ անգլիացիները մրցակցին պարտության մատնեցին 3-1 հաշվով: Գոլերից մեկն իր օգտին գրանցեց «Արսենալի» ռուսաստանցի լեգեոնական Անդրեյ Արշավինը: Իսկ հյուրերը միակ գոլը խփեցին ավելացված ժամանակում:

Եվ այսպես, հայտնի են խմբային մրցաշարի բոլոր 32 մասնակիցները: Նրանցից 22-ն այնտեղ ընդգրկվել էին իրենց բարձր վարկանիշի շնորհիվ, իսկ մյուս 10 ակումբները ուղեգիր նվաճեցին որակավորման փուլերում հաջող ելույթների շնորհիվ: Այսօր Մոնակոյում տեղի կունենա չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Թիմերն, ըստ իրենց վարկանիշների, բաշխվել են 4 զամբյուղներում, որոնցից վիճակահանության ժամանակ մեկական թիմեր կընդգրկվեն միեւնույն խմբում: Ընդ որում, միեւնույն երկրից մեկից ավելի ակումբներ չեն կարող ընդգրկվել մեկ խմբում:

Ամենաբարձր վարկանիշն ունի չեմպիոնների լիգայի ներկայիս գավաթակիր «Բարսելոնը», որը «Չելսիի», «Լիվերպուլի», «Մանչեսթր Յունայթեդի», «Միլանի», «Արսենալի», «Սեւիլիայի» եւ «Բավարիայի» հետ ընդգրկված է 1-ին զամբյուղում: Իսկ ահա Մադրիդի «Ռեալը», որը բոլորից հաճախ՝ 9 անգամ նվաճել է չեմպիոնների գավաթը, իր ավելի ցածր վարկանիշի պատճառով ընդգրկվել է 2-րդ զամբյուղում, որտեղ տեղ են գրավել նաեւ «Լիոնը», «Ինտերը», Մոսկվայի ԲԿՄԱ-ն, «Պորտոն», «Ալկմարը», «Յուվենտուսն» ու «Գլազգո Ռեյնջերսը»:

Բացի Մոսկվայի ԲԿՄԱ-ից, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից խմբային մրցաշարում հանդես կգան նաեւ ՌԴ չեմպիոն Կազանի «Ռուբինն» ու Կիեւի «Դինամոն»: Բացի «Ռուբինից», չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում իրենց նորամուտը կնշեն նաեւ «Վոլֆսբուրգը», «Ալկմարը», «Ունիրյան», «Դեբրեցենը», ԱՊՈԷԼ-ն ու «Ցյուրիխը»: Ընդհանուր առմամբ խմբային մրցաշարում ներկայացված են 18 երկրների ակումբներ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Վաստակավոր ուռուցքաբան, պրոֆեսոր Հայրապետ Գալստյանի ծննդյան 70-ամյակի առթիվ

2009 թ. օգոստոսի 31-ին լրանում է Հայաստանի առաջատար մասնագետներից մեկի՝ ՀՀ ԱՆ Բ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն, ՀՀ ԱՆ գլխավոր ուռուցքաբան, Առողջապահության ազգային ինստիտուտի ուռուցքաբանության ամբիոնի վարիչ Հայրապետ Մեսրոպի Գալստյանի ծննդյան 70-ամյակը:

Հ. Մ. Գալստյանը ծնվել է 1939-ին Երեւանում: 1960-ին ավարտել է Երեւանի պետական բժշկական ինստիտուտի բուժական-պրոֆիլակտիկ ֆակուլտետը: Երկամյա բժշկական պրակտիկայից հետո սկսել է իր գիտագործնական գործունեությունը ՀՀ ԱՆ ռենտգենաբանության եւ ուռուցքաբանության ԳՀՀ-ում՝ որպես կլինիկական օրդինատոր: 1965-ին ընդունվել է ասպիրանտուրա, որի ավարտին՝ 1967-ին, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Էնտերոկոլո- եւ էնտերոկոլոռեկտոպլաստիկայի ֆիզիոլոգիական հիմնավորումը» թեմայով:

1975 թ. ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի ՀՈՒԱԿ-ում (Մոսկվա) պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Հաստ աղիքի հեռակա հատվածների քաղցկեղի ախտորոշման եւ բուժման որոշ հարցեր» թեմայով:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանի մասնագիտական գործունեությունը ներառում է կյանքի հետեւյալ շրջանները՝

1986-1977 թթ. - ՀՀ ԱՆ ռենտգենաբանության եւ ուռուցքաբանության ԳՀՀ-ի ավագ գիտաշխատող,

1977-2008 թթ. - ՀՀ ԱՆ ՈՒԱԿ-ի ընդհանուր ուռուցքաբանության բաժանմունքի ղեկավար,

1981-2002 թթ. - ՀՀ ԱՆ ՈՒԳԿ-ի փոխտնօրեն գիտության գծով,

2002 թ. փետրվարից- ՀՀ ԱՆ ՈՒԱԿ-ի տնօրեն,

1994-ից - ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի ուռուցքաբանության ամբիոնի վարիչ,

2004-ից - ՀՀ ԱՆ գլխավոր ուռուցքաբան:

Պրոֆեսոր Հ. Մ. Գալստյանի հետազոտությունների հիմնական ոլորտները նվիրված են մի շարք տեղակայումների չարորակ նորագոյացությունների համալիր-զուգակցված բուժման արդյունքների բարելավմանը: Նա փորձնականորեն մշակեց եւ ֆիզիոլոգիապես հիմնավորեց հաստ աղիքի բարականդիքային պլաստիկայի վիրահատությունը հաստ աղիքի լայնածավալ մասնահատումներից հետո: Նա ԽՍՀՄ-ում առաջիններից էր, որ գործնականում ներդրեց ուռուցքով հիվանդների բուժման մեծ դոզաներով նախավիրահատական ճառագայթահարումը: Պրոֆեսոր Գալստյանի կողմից կրծքային ավշային ծորանում եւ շրջանային արյան մեջ ուռուցքային բջիջների հայտնաբերման հետազոտությունները հիմք տվեցին նրան՝ մշակելու միջոցառումների համալիր՝ ուղղված վիրահատական միջամտությունների ժամանակ ուռուցքային բջիջների տարածման կանխարգելմանը (էնդոլիմֆատիկ եւ ներզարկերակային ինֆուզիոն քիմիաթերապիա): Նրա հետազոտությունների շրջանակում են նաեւ քաղցկեղի համաճարակաբանության, կանխարգելման եւ սկրինինգի հարցերը:

Պրոֆ. Գալստյանը ճառագայթային բաժանմունքի հետ համատեղ ուսումնասիրել է կրծքագեղձի, ուղիղ աղիքի քաղցկեղի, փափուկ հյուսվածքների սարկոմաների դեպքում ռադիոմոդիֆիկատորների կիրառման հեռանկարները:

Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ուռուցքաբանության գիտական կենտրոնի (Մոսկվա) հետ համատեղ մանակցել է մի շարք նոր քիմիապատրաստուկների հակաուռուցքային ազդեցության եւ տոքսիկության ուսումնասիրմանը:

Բազմաեզր է պրոֆեսոր Գալստյանի գիտագործնական եւ մանկավարժական գործունեությունը.

1977-ից՝ ռենտգենոլոգների, ռադիոլոգների եւ ուռուցքաբանների հանրապետական գիտական խորհրդի կառավարման անդամ եւ նախագահի տեղակալ,

1981-1991 թթ.՝ ՀՀ ԱՆ գիտական բժշկական խորհրդի նախագահության անդամ, Գիտական բժշկական խորհրդի նախագահի տեղակալ,

1984-ին ԽՍՀՄ ուռուցքաբանների IV համագումարում ընտրվել է ուռուցքաբանների համամիութենական գիտական միության կառավարման անդամ,

1984-1991 թթ.՝ «Ուռուցքաբանություն» եւ «Բժշկական ռադիոլոգիա» մասնագիտություններով թեկնածուական եւ դոկտորական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ, իսկ 2001-ից՝ նախագահ,

1994 թ.՝ ԵՊԲՀ-ի «Վիրաբուժություն» մասնագիտությամբ Մասնագիտական գիտական խորհրդի անդամ,

1999-ից՝ ՀՀ ԱՆ ՈՒԱԿ-ի գիտական խորհրդի նախագահ,

2000-ից՝ ՀՀ ԳԱԱ Բժշկական գենետիկայի կենտրոնի գիտական խորհրդի անդամ,

2000-ից՝ «21 դարի հայկական վիրաբուժություն» Արհեստավարժների միության նախագահի տեղակալ,

2002-ից՝ պետբյուջեից ֆինանսավորվող թեմաների հանրապետական փորձագիտական հանձնաժողովի նախագահ,

2002-ից՝ ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության ազգային խորհրդական,

2006 թ. Փորձագետների եւ փորձագիտությունների միջազգային դիրեկտորատի կողմից ընտրվել է որպես միջուկային բժշկության ոլորտում միջազգային փորձագետ, ԱՄՆ,

2008 թ.՝ Բժշկական ուռուցքաբանների եվրոպական միության անդամ:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանը արժանացել է ազգային եւ միջազգային բազմաթիվ պարգեւների եւ կոչումների բժշկության եւ առողջապահության զարգացման գործում մատուցած ծառայությունների համար:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանը մի շարք գիտական ժողովածուների պատասխանատու-խմբագիր է, «Առողջապահություն», «Հայաստանի բժշկագիտություն», «Էրեբունի բժշկական տեղեկատու», Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի «Գիտության գլոբուս», «Առողջապահության ազգային ինստիտուտի հանդես»-ի, «Արյուն», «Ուռուցքաբանության հարցեր» (Սանկտ Պետերբուրգ), «Էնդոկրինոլոգիայի տեղեկատու», «Endoscopic Surgery of Armenia», ՀՀ ԳԱԱ-ի «A New Electronic Journal of Natural Sciences» ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանը արտասահմանյան բազմաթիվ կոնգրեսների, համագումարների եւ գիտաժողովների նախագահության եւ կազմկոմիտեի անդամ է:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանը բազմիցս ելույթներ է ունեցել կլինիկական ուռուցքաբանության արդիական հարցերին նվիրված միջազգային, համամիութենական, անդրկովկասյան կոնգրեսներում, համաժողովներում եւ գիտաժողովներում (Ռուսաստան, Վրաստան, Ուզբեկստան, Ճապոնիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Հնդկաստան, Նեպալ, Եգիպտոս, Շվեյցարիա, Իտալիա եւ այլն):

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանը կատարում է մեծ հասարակական աշխատանք՝

2004-ից՝ ռուս-հայկական գործնական համագործակցության «Առողջապահություն եւ սոցիալական ապահովում» բաժնի նախագահ,

2004 թ.՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահին առընթեր առողջապահության օրենքի մշակման ադմինիստրատիվ-իրավական հանձնաժողովի նախագահ,

2005 թ.՝ «Կանանց ու երեխաների պաշտպանության եւ ընտանեկան հարցերի ասոցիացիայի» պատվավոր անդամ (Երեւան),

2006 թ.՝ Երեւանի պատվավոր քաղաքացի:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանի ղեկավարությամբ պատրաստվել եւ պաշտպանվել են 14 դոկտորական եւ 33 թեկնածուական ատենախոսություններ:

Հեղինակ է 350 տպագրված գիտական աշխատանքների, այդ թվում՝ 7 մենագրությունների եւ ուսուցողական ձեռնարկների, 25 մեթոդական խորհուրդների եւ ռացիոնալիզատորական առաջարկների, հեղինակային վկայությունների:

Պրոֆ. Հ. Մ. Գալստյանը փայլուն կլինիցիստ է եւ վիրաբույժ, բուժական գործընթացի եւ գիտական գործունեության հիանալի կազմակերպող: Բժիշկ, որը վայելում է հանրապետության բժշկական հասարակության մեծ հարգանքը:

ՀՀ ԱՆ ՈՒԱԿ-ի կոլեկտիվը սրտանց շնորհավորում է թանկագին Հայրապետ Մեսրոպի Գալստյանի ծննդյան տարեդարձը՝ ցանկանալով նրան առողջություն եւ հաջողություններ նրա բեղմնավոր գործունեության մեջ:

ԳՈՒՅԺ

## Սերգեյ Միխալկով



**Երեկ կյանքի 97-րդ տարում Մոսկվայում վախճանվեց ռուսական կինոյի հանճարեղ դեմքերից մեկը՝ Սերգեյ Միխալկովը: Բժիշկների եզրակացության համաձայն՝ Միխալկովի սիրտը կանգնել է:**

**«Երջանիկ կյանք վիճակվեց: Հետ եմ նայում ու հասկանում, որ իսկապես երջանիկ եմ եղել, ունեցել եմ այն՝ ինչ շատերն են երազել: Երեք անգամ Ռուսաստանի հիմն գրելը մեծագույն պատիվ է, որի մասին շատերն են երազում», մի առիթով ասել է Սերգեյ Միխալկովը: Նա անընդհատ կրկնում էր, թե իր կյանքը ինչ-որ մեկը տնօրինում է, ավելի ճիշտ՝ ինչ-որ մեկը վաղուց ընտրել է իր կյանքի սցենարը:**

**«Բախտավոր աստղի տակ եմ ծնվել», հավելում էր նա: Այս խոսքերի մեջ ճշմարտություն կա: Խորհրդային տարիներին քչերին էր հաջողվում 26 տարեկան հասակում արժանանալ Լենինի շքանշանի, որ մանկական բանաստեղծությունները դառնային սիրելի ու հարազատ մի քանի սերունդների համար:**

**Երկրորդ համաշխարհայինից հետո Միխալկովը հիմնականում առակներ էր գրում, որոնք այսօր էլ մեծ ժողովրդականություն են վայելում Ռուսաստանում, իսկ 1960-ականներին արվեստագետի ուշադրության կենտրոնում էր կարճամետրաժ կինոն, միաժամանակ պիեսներ էր գրում մանկական թատրոնների եւ սցենարներ՝ ֆիլմերի համար: Դրանցից ամենաուշագրավը «3+2» ֆիլմի սցենարն էր, որ այսօր էլ սիրելի ու հարազատ է շատերի համար: Ավելի քան 20 տարի Միխալկովը ղեկավարել է Խորհրդային Ռուսաստանի գրողների միությունը: Արժանացել մի շարք բարձր շքանշանների ու ոսկե մեդալի:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Ուկրաինայի ազգային բանկը թողարկել է «Սուրբ Խաչ» վանքին նվիրված արծաթե հուշադրամ

Այս տարի նշվում է Ղրիմում գտնվող հայկական Սուրբ Խաչ վանքի 650-ամյակը, ինչի կապակցությամբ Ուկրաինայի ազգային բանկը «Ուկրաինայի ճարտարապետական կառույցներ» հուշադրամների շարքի շրջանակում թողարկել է արծաթե հուշադրամ՝ նվիրված XIV-րդ դարում հիմնադրված հայկական Սուրբ Խաչ վանքին: Հուշադրամի դիմերեսին պատկերված է վանքի տարածքում տեղակայված խաչքարը, իսկ դարձերեսին պատկերված են վանական շինությունները. ձախ կողմում՝ «Հին Ղրիմի հայկական վանքը» (XIV-րդ դար) և աջ կողմում՝ Սուրբ Խաչ վանքը:

Հատկանշականն այն է, որ առաջին անգամ արտերկրի կողմից իրականացվել է Հայաստանի պատմությանը և հայկական մշակույթին նվիրված հուշադրամի թողարկում:

Տեղեկացնում ենք, որ «Սուրբ Խաչ» արծաթե հուշադրամ ձեռք բերել ցանկացողները կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի «Դրամագետ» վաճառասրահ:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*







### Բժշկական ապահովագրություն մրցույթ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը հրավիրում է շահագրգիռ կազմակերպություններին ներկայացնելու դեսպանատան տեղի աշխատողների համար բժշկական ապահովագրության ծառայությունների մատուցման առաջարկներ: Առաջարկ ներկայացնողները պետք է լինեն Հայաստանում բժշկական ապահովագրության ոլորտի գործող ընկերություններ եւ հնարավորություն ունենան մատուցել մեծ ծավալների հասնող ծառայություններ: Հետաքրքրված կազմակերպությունները, սկսած ս.թ. օգոստոսի 27-ից, կարող են առաջարկների ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ձեռք բերել ԱՄՆ դեսպանատնից, հասցեն՝ ք. Երեւան, Ամերիկյան փողոց 1:

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 27.08.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: